


diary

57



предлагают супругам взыскать супруга супруги

LW
57

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

258.

Nº 153

ՀԵՍՈՒԿԵՑԻ ԱԹԷԶԻՆ ԱԴՕԹՔԸ

ՄԱԿԱԿԱՎՈՐ ԶԲՈՅՑ



ՊԵՐՃ ՊՐՈՀԵԱՆԻ

1602.



Արագ. տպար. Մ. Մարտիրոսեանցի

1899

ՏԵՂՄ

ԱՐԳՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Դозволено ценз. Тифлисъ, 7-го Декабря 1898 года.

28-58

34-96



Լոնդոնի բոլոր փողոցներովն երկաթուղիք են անցնում: Քաղաքի փողոցները կապուած են միմեանց հետ երկաթուղիների կամուրջներով: Այդ կամուրջներից մէկի տակ, մի անկիւնում, սրանից մի քանի տարի առաջ՝ ամեն Աստուծոյ առաւօտ, ժամը 5-ից մինչև 8, կանգնած էր լինում մի անիւաւոր արկղ: Երկու անազէմեծ սրճաման գրուած էին լինում այդ արկղի կափարիչի վրայ: Սրճամանների մէջ շարունակ վլվլթում էր տար սուրճը, իսկ տակերին անպակաս էր ածուխի կրակը: Լուսաղէմից՝ կամուրջի անկիւնը դառնում էր մի փոքրիկ սրճամունք Հաղարաւոր բանուորներ, որոնք զնում էին քաղաք աշխա-

տանքի՝ դեռ առաջ կանգ էին առնում այդ սրճատանը, անուշ էին անում պատրաստի սուբճը և ապա շտապում էին իրանց զործին: Տեղը ճանապարհի վրայ էր և հանգստանալու յարմար: Ամենքը սիրում էին այն անկիւնը, ոչ քամին, ոչ անձրեն և ոչ ցուրտը չէին ծեծում այնտեղ: Իսկ սա մեծ յարմարութիւն էր, մանաւանդ աշնան ժամանակները: Ամեն կողմից պատսպարուած մի անկիւն, նստարանները շարուած, վերեւից ծածկուած, տաք սուբճը պատրաստ: Սովոր մարդը, որ սիրում էր տանից ու ընտանիքից հեռու նախաճաշիկ անել՝ կարող էր նստել և հանգստանալ. բաց երկնքի տակ չէր մտայ այնպիսին: Մի յարմարութիւնն էլ այն էր, որ սրճափաճառը շատ հանգիստ ու հանդարտ մարդ էր. լաւ ծառայում էր ճակատի քրտինքով հաց աշխատող իւր յաճախորդներին և ափեղցիեղ շատախօսութիւնով ու գատարկաբանութիւններով չէր ճանձրացնում ոչ ոքի: Լզաբ-լզաբ, բարձրահասակ, տարիքն առած, ծանրաբարոյ և լուրջ մարդ էր սրճափաճառը: Ամենքի հետ նա վարւում էր յարգանքով, զգուշութեամբ և մի տեսակ խորհրդաւոր կերպով. օրինակի համար, ոչ ոք դեռ շգիտէր, թէ ով և որտե-

զացի էր նա: Ճատ հաւանական է սակայն, որ այդ մանրամասնութիւնները յայտնի էին այն ոստիկանին, որ ամեն կէս ժամը մի անգամ անցնում էր նրա մօտովն և միշտ քաղցրութեամբ ողջունում էր: Բայց և այնպէս՝ մարդիկ կային, որոնք արդէն քիչ ու շատ տեղեկութիւն ունէին սրճափաճառի կեանքից: Այսքանն էր նրանց ունեցած տեղեկութիւնը, թէ սրճափաճառն ամեն Աստծու օր՝ եօթն ու կէս ժամից ոչ ուշ՝ իւր ունեցած շունեցածը տանում պահ էր տալիս մերձակայ սրճափաճառը: Այդ որոշեալ ժամին՝ նա սովորաբար վերջացնում էր զործը և լուռ ու մունջ քաշուում, շուրջը նայելով հեռանում ու խառնւում փողոցներում վխտող անց ու դարձ անողներին. հէնց կարծես թէ երկիւղ էր անում, որ ոչ ոք չնկատէր: Մինչե օրս ոչ ոք չէր էլ մըտածել՝ հետեւ այդ մարդին և իմանալ, թէ ինչ տեղ է նրա բնակարանը, կամ ինչ ճանապարհով է իւր հացն աշխատում. այսքանն էր յայտնի, որ նրա խանութը, եթէ կարելի է այսպէս ասել՝ միշտ յաճախորդներով լիքն էր. ամենքին նա ձայնը կտրած՝ ծառայում էր և իրան լաւ էր պահում. այդ պատճառով էլ ոք չէր ափասում իւր կո-

պէկները՝ նրա մատակարարած համեղ ու
կազդուրիչ խմբչքի համար:

Այսպէս անցան երկար տարիներ:

Մի առաւօտ, մինչ սրճավաճառն զբաղ-
ուած էր իւր գործով՝ յանկարծ նկա-
տեց, որ երկու խոշոր ու թուխ-թուխ աշ-
քեր՝ տնկուած նայում են իւր վրայ և սեղանի
տախտակի երեսին շաղ անցած կարագի ու
հացի մանրուքի վրայ: Կատարեալ քաղցած
մկան ագահաբար նայուածք էր այն, որին
որսորդի զրած անուշ պատառը հրապուրում
և դէպի թակարդն է քաշում: Մի թշուառ
աղքատ աղջիկ էր նայողը: Նրա խճուած
մազերը թափուել էին պարանոցի և ճակա-
տի վրայից ու ծածկել խեղճի նիհարիկ ու
ձուածե երեսի կէսը: Այդ մազերն էին միայն
որ ծածկում էին ողորմելու զլուխն ու պա-
րանոցը. ուրիշ ծածկոց նա չունէր: Մի
զզզուած ու պատառուտուն շրջազգեստ
ունէր հազին, որ եթէ փտած ժապաւէնով
վրան ամրացած չլինէր՝ վաղուց մերկ և
մըսած ու կապտած ուսերիցը վայը ընկած
կլինէր: Թիկնել էր սրճավաճառը սեղանի
յետեն ընկած կթոցին ու նայում էր, թէ
ինչպէս էր անտէր անտիրական երեխան բո-
պիկ ոտքերով կանգնել խճուղու վը-

րայ և ոտքերն իրար քսում, որ մի քիչ տա-
քանան: Թէ ով էր այն աղջիկը՝ չգիտէր
սրճավաճառը. այսքանը միայն տեսնում էր
նա, որ խեղճը ձայնը կտրել էր ու մնացել
կանգնած, ու երբոր ինքը ամեն անգամ տաք
տաք սուրճը լցնում էր գաւաթները՝ թշուառ
արարածի աշքերը քաղցածութիւնից պէծ-
պէծին էին տալիս, նազուկ շրթունքները շա-
րունակ ճպճպացնում էր. կարծես թէ երե-
ւակայութեամբ զգում էր համով հոտով սուր-
ճի քաղցրութիւնը:

— Հապա, մօտ արի, ասաց սրճավաճա-
ռը՝ երբ բոլոր յաճախորդները ցրուեցան և
մնաց միայն մի տղայ, որ ծանը-ծանը վայե-
լում էր իւր նախաճաշիկը: Այստեղ ինչո՞ւ ես
կանգնած, հարցրեց նա իւր սովորական հան-
դարտ ձայնովը. ինչո՞ւ չես զնում: Դէհ, հե-
րիք ծանը ու բարակ անես. բաւական է
որքան կանգնեցիր, գնա, գնա ասում եմ,
թէ չէ . . .

— Ես իսկոյն կերթամ, պարոն, ասաց
աղջիկն ուսերը վեր քաշելով, որ շորը մի
քիչ բարձրացնէ, մերկ վիզը ծածկէ. չէք
տեսնում, անձրեն ինչպէս է թափուամ. այս-
պէս ժամանակը շանն ու կատուին էլ մեղք
է տանից դուրս անելը. իսկ իմ մայրս դի-

շերս տուն չէ եկել և բանալին հետը տարել է... Եթէ իմանաք, պարո՞ն, թէ ինչպէս ուրախալի է, երբ սուրճի անմահական հոտը քթիս է դիպչում։ Գիտէք, մի բան էլ կայ. ես որ ձեզ մօտ կանգնած եմ՝ ոստիկանն էլ ինձ այստեղից չի քշի հեռացնի. նա երեխ կարծում է, թէ ես ձեր յաճախորդներից եմ, նախաճաշելու եմ եկել։

Ասաց ու բարձր ձայնով ծիծաղեց աղջկը, կարծես նա ծաղլում էր թէ իւր զըլուխը և թէ ոստիկանին։

— Ես ինչպէս տեսնում եմ՝ դու այսօր ոչինչ չես կերել, ասաց սրճավաճառն ու կռացաւ դէպի աղջիկը, այնքան մօտեցաւ նա, որ քիչ մնաց քիթն առնում էր նրա երեսին։

— Ոչ, պատասխանեց սառնամբութեամբ աղջիկը. ես շատ լաւ գիտեմ, որ զեռ շատ պիտի սպասեմ՝ մինչև իմ ճաշելու ժամանակը համնի։ Դուք ի հարկէ շգիտէք, թէ ինչ է նշանակում քաղցածութիւն։ Հիմի զեռ այնքան զգալի չէ ինձ համար, բայց մինչև ես ինձ համար ուտելու բան կճարեմ՝ իմ ինձ կհասնի... շատ դժուար կլինի ինձ համար, այո՛, և դժուար, և վատ կլինի։

Ասաց աղջիկը, բաղմանշանակ դլուխ

տուեց ու գնաց. հէնց կարծես, ուզում էր ասել, թէ իւր զլխովը շատ այնպիսի փորձանքներ են անցել, որ սրճավաճառի համար անհասկանալի են։

Մի քանի քայլ հազիւ էր փոխել աղջիկը՝ որ լսեց խանութպանի ձայնն ու յետ դարձաւ։

— զուտ, այստեղ սկցիր, շնչաց սրճավաճառը մեծ զգուշութեամբ. այստեղ մնացել է փոքր ինչ սուրճ և մի քանի պակսիմաժ. վերցրնւ, կեր, բայց մի յանդգնիր միւս անդամ այս կողմերն եղեալ։ Լաւ իմացիր, ես իմ կեանքումս ողորմութիւն չեմ տալիս, և եթէ դու ինձանից ողորմութիւն խնդրած լինէիր՝ ես իսկոյն ոստիկանի ձայն կտայի։ Այ, ոտքդ այստեղ դիր, կրակին մօտ. հը, քեզ համար յարմար է, թէ ոչ։

Ի՞նչ մեծ հրճուանքով նայեց երեխան խանութպանի երեսին. նա նստեց դատարկ զամբիւղի վրայ, ոտքերը կրակին մօտեցրեց և տաք սուրճի գաւաթը դրեց ծնկանը. Բերանն այնքան էր լցրել, որ պատասխան չէր կարողանում տալ. զլուխը կախել էր ու զոհուակութիւնն երեսից թափւում էր։

Ճատ շտեց, սրճավաճառը ժողովեց իւր անօթեղէնները. երբեմն երբեմն թեքւում

մտիկ էր տալիս նա աղջկայ երեսին և մտքի
հետ ընկած՝ գլուխը շարժում էր:

— Անունդ ինչ է, հարցրեց նա երեխային,
յամենայն դէպս ինձ համար ողջ մէկ է, եր-
բէք քո անունն ինձ չէ հետաքրքրում. ինչ
գործ ունիմ քո անունի հետ: Զարմանում
եմ միայն....

— Անունս Զեսսիկա է, պատասխանեց
աղջիկը. բայց մայրիկս և շատ ուրիշներն
ինձ կոչում են Զեսկա: Եթէ դուք իմ տեղը
լինէիք՝ ձեր անունից կզգուէիք. «Զեսկա,
արի, Զեսկա, գնա»: ով ասես, որ ինձ որևէ
յանձնաբարութիւն չէ անում. և քիչ կպա-
տահի, որ հետն էլ զլիսիս շմբխկացնեն ու
միսս շնմկտեն. այ, տեսէք:

Աղջկայ ձեռներին նայողը դժուար թէ
կարողանար վճռել, արդեօք ցըտից են այն-
պէս սևացել և կապտել, թէ ծեծից: Եւ
սրճավաճառը նայում էր աղջկայ ձեռներին
ու զլուխը շարժում, որից Զեսսիկան սիրտ
առաւ ու շարունակեց:

— Այս, ինչ լաւ կլինէր, եթէ ես միշտ
այստեղ մնայի, ինչպէս որ հիմա տեղս նըս-
տած եմ. բայց դուք կթողնէք, կերթաք, և
ես այլ ես չեմ կարող այստեղ գալ. եթէ
գալու լինիմ՝ դուք իսկոյն ոստիկան կկանչէք:

Սրճավաճառը շուրջը նայեց, որ տեսնէ
թէ այն մօտիկներում աղքատ երեխաներ
հօ չեն երևում. յետոյ նա մեզմօրէն ասաց.
— Այո՛, այդպէս է. ապա աւելացրեց.

— Լսիր, ինչ եմ ասում. եթէ դու ինձ
խօսք կտաս, որ ամբողջ շաբաթ այստեղ
չես գայ և ոչ ոքի չես ասի, թէ ինձ մօտ
ես եղել՝ ես քեզ իրաւունք կտամ միւս ան-
գամ ինձ մօտ գալ և գարձեալ կհիւրասիրեմ՝
քեզ, իսկ հիմա թող գնա:

— Գնալը գնում եմ, պարո՞ն, ասաց շտա-
պով աղջիկը. բայց եթէ դուք որկիցէ յան-
ձնաբարութիւն ունիք, որ ես կարող լինէի
կատարել՝ ես շատ լաւ կկատարէի: Թոյլ
տուէք օգնել ձեզ և տանել ձեր իրեղնները:

— Ոչ, ոչ, բարձր ձայնով ասաց սրճա-
վաճառը. շուտ, գնա հեռացիր. խելքդ գըլ-
խիդ պահիր և մի մոռանար, որ մինչև միւս
շաբաթ քեզ այստեղ շպիտի տեսնեմ:

— Ըատ լաւ, ասաց աղջիկը և ցեխոտ
փողոցով վագում էր, կարծես նա իւր շտապ
հեռանալովն ուզում էր ապացուցանել, թէ
ինքը չէ մոռացել իւր կապած պայմանը և
միանգամայն համաձայն է կատարելու:

Իսկ սրճավաճառը զգուշութեամբ շուրջն
աշք ածելով, քարշեց և տարաւ իւր ունե-

ցած չունեցածը կամրջի մօտ հղած սրճա-
տունը և ամբողջ օրը չերեաց երկաթուղու
կամրջի թաղումը:

Բ.

Զեսսիկան հաստատ մնաց իւր խոստու-
մին. իզուր էր ուրբաթախօս (լռակեաց)՝
սրճավաճառն ամեն առաւօտ իւր յաճախորդ-
ներին մի կողմից ժառայում և միւս կողմից
իւր անկիւնից աշքը տնկած նայում, թէ հի-
մի ուր որ է՝ կերեայ աղջիկը. նրա նիհար
դէմքի ստուելն անդամ չէր երեւում:

Բայց պայմանեալ ժամանակին՝ յան-
կարծ երեաց նա, կանդնեց մեզ յայտնի
սուրճի արկղի մօտ ու քաղցած փորով, աղա-
հօրէն աշքերը տնկած սկսեց նայել, թէ
ինչպէս էին կարկանդակներն ու պակսիմաթ-
ներն իրար յետելից յաճախորդների որկո-
րից ներս գնում: Ատամներ էին, որ գոր-
ծում էին, խժունամ էին ու խժունամ, իսկ
մեր հալումաշ եղած Զեսսիկան խեղճ-խեղճ
կանդնած էր հեռուն և ուշի ուշով դիմում

էր, թէ ինչպէս են յաճախորդները փորերը
կշտացրած թողնում հեռանում:

Բայց հէնց որ մերձակայ եկեղեցու գըլ-
խից ութ ժամը խփեց՝ բաւական էր սրճա-
վաճառի մի ակնարկը, և Զեսսիկան շտապով
մօտեցաւ ու նստեց իւր տեղը, դատարկ զամ-
բիւղի վրայ: Ինչպէս սրճավաճառը նկատեց՝
իւր կարծիքով այս անդամ աղջիկն աւելի էր
նիհարել, նրա հնոտի հագուստն աւելի էր
մաշուել անպէտքացել:

Հէնց որ նա իւր կուծումած մատներով
սուրճի գաւաթը մօտեցընց շրթունքին, սրճա-
վաճառը առաջի օրուանից մնացած ու շո-
րացած մի կտոր կարկանդակ բերեց ու դը-
րեց նրա ծնկանը:

— Ձեր անունն ինչ է, ուշադրութեամբ
նայելով խանութպանին, հարց տուեց աղ-
ջիկը:

— Իմ անունս Դամիէլ է, պատասխանեց
սրճավաճառը անվստահօրէն և տհաճու-
թեամբ. թւում էր, թէ նա չէր կամենում
որ իւր մասին խօսք ու զրոյց լինի:

— Իսկ ձեր բնակարանը ո՞րտեղ է, շա-
րունակեց հարցնել Զեսսիկան:

— Գիտես ինչ, սիրելիս, խստութեամբ
պատասխանեց սրճավաճառը. եթէ դու քո

հարցմունքներով ինձ պիտի ձանձրացնես՝
շատ լաւ կանես՝ վեր կենաս քաշուես։ Միթէ
դու չես տեսնում, որ ես երբէք չեմ հետա-
քըքըւում իմանալ, թէ դու որտեղ ես բնակ-
ւում։

— Ներեցէք, խնդրեմ, ես երբէք մտա-
գիր չէի ձեզ վիրաւորելու, համեստութիւ-
նով ասաց աղջիկը. ես միայն ցանկանում
էի իմանալ, թէ որտեղ է ապրում ձեզ նման
մի բարի մարդը։ Այնպէս չէ, որ դուք շատ
բարի էք։

— Չդիտեմ, մտախոհ և հանդարտ պա-
տասխանեց Դանիէլը. ի՞մ կարծիքով, ես բո-
լորովին բարի մարդ չեմ։

— Ախ, ընդհակառակը, դուք ինքներդ
շատ լաւ զիտէք, որ շատ բարի մարդ էք.
այս ինչպիսի լաւ սուրճ էք պատրաստում։
ինչ հրաշալի կարկանդակներ են սրանք։
Գիտէք, ես փաղուց է որ ձեզ հետեւում եմ,
դեռ ինձ նկատելուց էլ շատ առաջ. ձեզ
ոստիկանն անդամ անհանգիստ չէ անում և
այստեղից հեռացնում։ Եյն, այն, պարզ երե-
ւում է, որ դուք շատ բարի մարդ էք։

Մի խոր հառաջանք դուքս եկաւ Դա-
նիէլի սրտից. լուռ ու մունջ սկսելով ժողո-
վել իւր իրեղէնները՝ նա խորասուզուեց մը-

տածմունքների մէջ. այս ինչ նկատողու-
թիւն էր աղջկայ կողմից իւր բարութեան
վերաբերութեամբ։ Հըմմի, ինքը լաւ սուրճ
է պատրաստում... ոստիկանն իրան անհան-
գիստ չէ անում... այն, այդ ուղիղ է։ Բայց
հէնց որ Դանիէլն սկսեց հաշուել իւր վաս-
տակած փողերը, որ պարկով լիքը այնտեղ
դրուած էր՝ նա աւելի ծանր յոգոց հանեց։
Միենոյն ժամանակ նա դիտմամբ վայր ձգեց
մայթի վրայ ցեխի մէջ մի սկ փող ու աւե-
լի արագօրէն ժողովելով իւր ունեցած շու-
նեցածը՝ աշքի տակով սկսեց նայել իւր առ-
ջեր նստած աղջկանը։

Ոչ մի նշան չցոյց տալով իւր գէմքի վրայ՝
աղջիկը շտապով ոտքի գրեց փողի վրայ. մի
կողմից շարունակում էր նա ասուլիս անել
Դանիէլի հնտ և միւս կողմից զգուշութեամբ
փողը ոտքով մօտ էր քաշում։

Դանիէլը խղճաց աղջկանը. նրա սիր-
ութ ցաւեց խեղճի համար, բայց մի և նոյն
ժամանակ ուրախացաւ, որ յաշողուեց իրան
բռնել մի անշափահաս գող։

Դնալու ժամանակն էր, բայց Դանիէլը
կամեցաւ գեռ նախ ստիպել աղջկանը ոտքը
վեր քաշել և ցոյց տալ իւր թագցրած փո-
ղը։ Դանիէլը մտքումը դրեց հրամայել աղջ-

կանը, որ նա միւս անգամ չհամարձակուի այս կողմերը ոտք դնել. «Ճնորհակալութեան փոխարէն էր, մտածում էր նա. երկու անգամ ես սրան հիւրասիրեմ, իմ բոլոր ազգ ու ընտանիքից աւելի գուրեմ գուրզուրեմ, որ կեանքիս մէջ ինձ համար շատ հազուագիւտ երևոյթ է, և հէնց առաջին անգամից մի անպիտան լակոտ, մի թափառաշրջիկ մուրացկան, ապերախտութեամբ իմ հակառակ դնայ, ինձ կողոպտէ ու յափշտակէ»:

Դեռ վրզովուած և յուգուած տատանւում էր Դանիէլը մտատանջութեան մէջ, որ յանկարծ երեխայի դէմքն այլայլուեց. նրա դալկահար թշերը շառագունեցին, և արտասուքի խոշոր կաթիլները թափուեցին աշքերից. Կռացաւ Զեսսիկան, ցեխի միջից վերցրեց փողը, իւր ցնցոտիներովը մաքուր սրբեց և լրութեամբ դըեց սեղանի վրայ:

Լրջադէմ և խորագնին ուշադրութեամբ նայեց Դանիէլն աղջկանն ու հարցրեց.

— Ի՞նչ է այդ:

— Ներեցէք, պարոն, պատասխանեց նա. այս փողը գլորուեց, վայր ընկաւ, իակ դուք չնկատեցիք:

— Քեզ եմ ասում, Զեսսիկա. խոստովանիր ինձ ամեն բան ճշմարտութեամբ:

— Այս, ներեցէք, աղաչում եմ, հեկեկաց աղջիկը. ես երբէք կեանքիս մէջ փող չեմ ունեցած. այս փողը գլորուեց և ուղիղ ընկաւ ոտքիս առաջ — դուք չնկատեցիք, ես էլ թագցը. բայց նոյն բոպէին մտաբերեցի, թէ որ աստիճան բարի գտնուեցիք դէպի ինձ, ինչ համեղ սուրճ, ինչ անուշ կարկանդակներ տուիք և թոյլ տուիք նստել այստեղ ու տաքանալ. մտածեցի ես այս ամենն, և չկարողացայ սեփականել ձեր փողը: Ես արգէն գիտեմ, որ այսուհետեւ դուք ինձ իրաւունք չեք տայ այստեղ գալու:

Դանիէլն իրեղէնները զամբիւղի մէջ տեղաւորելու պատրուակով երեսը շրջեց աղջկանից, իսկ վերջինս կանգնել էր և ամօթից ու երկիւղից գողում. արտասուքը շարունակ հոսում էր նրա աշքերից: Այս խաղաղ և ապահով անկիւնը, ուր ինքը երկու անգամ անուշ սուրճ է վայելել և իւր մըսած անդամները տաքացրել, իւր համար կատարեալ դրախտ էր հանդիսացել այդ կարճ միջոցումը. իսկ հիմա զգում է և գիտէ աղջիկը, թէ իւր որ յանցանքի համար պիտի այստեղից իրան հալածեն: Նա շատ լաւ հասկանում էր, թէ այստեղից հալածուելուց յետոյ՝ իրան սպասում են Հոնդոնի անվերջ,



տխուր և ցուրտ փողոցները. նա զգում էր, որ ինքն այնուհետև ոչ ոքից մի քաղցր խօսք լսելու չէ, թէ այլս իւր անձը կազդուրելու, մի փոքր ոյժ ստանալու համար ոչ ոքից մի գաւաթ սուրճ շպիտի կարողանայ ստանալ... Մտածում էր աղջիկը և չէր շտապում հեռանալ. նա ցաւ ի սիրտ սպասում էր լսելու այն վճիռը, թէ ինքը այլս իրաւոնք չունի այսուհետև վերադառնալու այս միակ ապաստանաբանը:

Վերջապէս Դանիէլը դարձաւ գէպի աղջիկը, նկատեց նրա արտասուրոտ հայեցքը և, ինչպէս պարզ, կարելի էր կարդալ իւր թաց աշքերից՝ ինքն ևս ոչ պակաս հոգեպէս յուզուած էր:

— Ձեսսիկա, ասաց նա. Երբէք ես այդ բանը չէի կարող անել՝ ինչ որ հիմայ դու արիր. Այսօր չորեքշաբթի է, և դու իրաւոնք ունիս շաբաթը մի անգամ՝ ամեն չորեքշաբթի օր գալ այստեղ, ուր քեզ համար միշտ պատրաստ կլինի մի բաժակ սաքտաք սուրճ:

Այնպէս հասկացաւ խեղճ աղջիկը, թէ Դանիէլն ուզում էր ասել, թէ ինքը երբէք փողը ոտքի տակին չէր թագցնի. այդ պատճառով էլ թողեց ու հեռացաւ տիսուր և

սիրտը կոտրած, չնայելով որ միւս կողմից ուրախութիւնից նրա ոտները գետնիցը կրտսուել էին, մտաբերելով՝ որ ամեն շաբաթիրան սպասում մի արժանավայել հիւրասիրութիւն։ Գալով Դանիէլին՝ նա ճանապարհին շարունակ այս էր մտածում, թէ ինչպէս պիտի նեղանար խեղճ որբը և ինչպիսի մտատանջութիւններ միմեանց յետեկից յաջորդելու էին նրա մանկական ուղեղի մէջ։ Ժամանակ առ ժամանակ՝ շարժում էր Դանիէլն իւր գլուխը և իւր մէջ վինթֆնթում։ — ոչ, ես այդ բանը չէի կարող անել, երբէք չէի անի».

Գ.

Տարուան վերջին երեք ամիսներին՝ Ձեսսիկան իւրաքանչիւր շաբաթ՝ չորեքշաբթի օրերն այցելում էր մեզ ծանօթ սրճարանը և ամենայն համբերութեամբ սպասում էր՝ մինչ յաճախորդները քաշւում էին, ապա թէ ինքը ստանում էր իւր բարերարից որոշեալ նախաճաշիկը։

Մի քանի ժամանակ որ անցաւ՝ Դանիէլն իրաւոնք տուեց աղջկանն իւր իրեղէններից մի քանի բաներ հետը կըել մերձակայ սըճարանը. բայց նա երբէք թոյլ չէր տալիս նորան հետը գնալ մինչև իւր բընակարանը. ընդհակառակն, ոպասում էր Դանիէլը, մինչև որ աղջիկը աշքից հեռանում էր, ապա թէ այն ժամանակը փողոցից փողոց ծուռելով զնում հասնում էր իւր կացարանը. ճիշտ այդպէս վարւում էր Դանիէլը և Զեսսիկայի նախաճաշելու ժամանակը. նա միջոց չէր տալիս աղջկանը որևէ հարցմունք իրան տալու, մի քանի կցկտուր խօսքեր հազիւ լինում էր երկուսի մէջ. Իսկ Զեսսիկան իւր կողմից երբէք մըտքովը չէր անց կացնում թագցնելու իւր բնակարանը. Դանիէլը, եթէ ցանկանար՝ ամեն ժամանակ կարող էր զնալ աղջկայ յետնից:

Զեսսիկայի բնակուած սենեակը մի օր մարագ էր եղած, իսկ մարագի տակը մի խարխուլ և հին պանդոկի գուն էր. Ներկայումս այն բագումը կենող շգիտնմ լինչ առեստականների երկու-երեք իշանն էին կապում այն գոմումը. Մի հին սանդուքը կար այնտեղ, որի տախտակները կոտրտուած և փայտերի ծայրերը փտած էին. այդ սան-

դուխքով ուղղակի պիտի բարձրանայիր և մտնէիր ձեղնայարկը (չարդախ), ուր որ Զեսսիկայի սենեակն էր:

Այդ սենեակը բնակութեան համար մի-անգամայն անյարմար էր և բոլորովին դատարկ՝ ինչպէս և տակի գուն էր. Փոքը ինչ փտած հին խոտ էր ածած այնտեղ, երեսն ըստ ամենայնի թաց. այդ էր Զեսսիկայի անկողինը. Նրա ունեցած բոլոր կանկարասիքն՝ աղիւսների վրայ զըռւած քանի մի հատ հին տախտակներն էին:

Բոլոր նրանց ստացուածքը, ինչ որ կարելի էր ծախել կամ զրաւ դնել՝ վաղուց չքացել էին. շատ ափսոսում էր Զեսսիկայի մայրը, որ չէ կարողացել իւր աղջկանն էլ ձեռքից հանել, ազատուել նրանից. բայց եթէ խղճմտանքով ասենք՝ դժուար թէ Զեսսիկան իւր մօր համար մեծ ծանրութիւն եղած լինէր, որովհետև մայրը վաղուց արդէն դադարել էր նրա մասին մտածելուց. Երեխային էր մնացել հողալ իւր դառն ապրուստը և իւր ցամաք պատառը. Թշուառ աղջիկն այդ տան բոլոր բնակիչների ծառան և աղախինն էր. ով ասես որ նրան տեղ չէր ուղարկում և չէր բանացնում. աւելացրու սրա վրայ և այն, որ ողորմելին մօր

ձեռքին կատարեալ նահատակ էր, շարունակ ծեծ ու ջարդ էր ուտում մօրից։ Այնքան ուժից վեր ծառայութիւններ էր արել նա այդ տան բազմաթիւ բնակիչներին, որ հոգին դուրս էր եկել. նախատինք ու անարդարներ էր որ թափում էին գլխին տան կենողների կողմից։ Եւ ահա, հէնց այդ նեղութիւնների ժամանակն էր, որ ամեն չորեքշաբթի սպասում էր նորան մեր ասած բաւականութիւնը, և Աստուած ողորմած էր, դեռ կարող էր ապագայում տւելի երջանիկ բախտի հանդիպել։ Այդպէս էլ եղաւ. շատ չտեսեց, մի նոր անակնկալ հանդամանք մեծ ուրախութիւն և միսիթարութիւն պատճառեց նրա սրտին։

Մի ձմերային երեկոյ՝ Զեսսիկայի մայրը հարբած դրութեան մէջ խիստ սաստիկ ծեծեց աղջկանը։ Ի՞նչ անէր ողորմելին. քաղցած ու հալումաշ, լալով ու մղկտալով դուրս եկաւ տանից ու քաշուեց հեռացաւ։ Մէկ էլ նկատեց նա, որ իրանից ոչ հեռու՝ առաջից գնում էր բարեբարը. իրան քաջ ծանօթ Դանիէլի բարձր հասակն էր աշքին ընկնողը։ Ոտքից գլուխ սկ հագած, սպիտակ փողպատը կապած՝ բռնել էր Դանիէլը ճրագներով լուսաւորուած փողոցն ու հաւասար քայլե-

րով, վստահ, համարձակ գնում։ Զեսսիկան սիրտ չարեց մօտ գնալ, հեռուից հեռու նրա հետքը բռնեց ու գնաց։ Եկաւ Դանիէլը, կանգնեց մի մեծ շինութեան դարպասի առաջին, բաց արեց և մտաւ բագը։ Մի կամարակապ դուռը կար այնտեղ. Դանիէլը բանալին հանեց զըպանից, բաց արեց դուռն ու ներս մտաւ.

Զեսսիկան ներս խցկուեց Դանիէլի յետելից և ոտից գլուխ դող ելած՝ երկիւղից մի բոպէաշափ մնաց զբան շեմքի վրայ կանգնած, մինչև որ ներսում վառուած ճրագի լուսից սիրտ առաւ և արձակ համարձակ մի քանի քայլ առաջ գնաց։ Մի դուռը կար այնտեղ, ծիրանեգոյն վարագոյրներով զարդարած. աղջիկը կամաց յետ բաց արեց այդ դուռն այնքան, որ կարելի էր ներսը տընտղել։ Այն աստիճան կարողացաւ սրտապընդուել Զեսսիկան, որ կարողացաւ կամաց ներս մտնել այդ դուռին և առանց աղմուկ հանելու՝ ծածկուել ու մնալ մութը խաւարի մէջ ցցուած։ Ըատ շանցաւ՝ տունը բոլորովին լուսաւորուեց։ Դանիէլն ինքն էր, որ վառուած էր դագային լապտերները. Գազի պայծառ լոյսը տարածուեց ամրող տեղերը և ապշեցրեց աղջկանը։ Եկեղեցի էր այդ

տունը, յատակն ամբողջ ծածկուած էր գորդերով։ Երկու կողմից շարուած էին սև ներկած նստարաններ։ Նստարանները միմեանցից անջատում էին նմանապէս սև տախտակներով։ Եկեղեցու մէջտեղից երկու կարգ սիւներ էին զնում, այդ սիւներից մէկի յետեր թագ կացաւ Զեսսիկան և աչքերը տընկած՝ հետաքրքրութեամբ դիտում էր, թէ ինչպէս էր Դանիէլը բարձրանում ամբիոն և այնտեղի ճրագները վառում։ Օ՛հ, ինչպէս հիացաւ նա, երբոր ճրագի լոյն ընկաւ ամբիոնի մօտ դրուած երգեհոնի խողովակներին, որոնց ոսկեփայլ շաւաղը աչք էր խոտղեցնում։ Մէկ էլ եկեղեցու դռնապանը, որ ոչ այլ ոք էր, եթէ ոչ Դանիէլը, մտաւ խորանը և մի քանի ըոպէ դուրս չեկաւ. սրանից յարմար ժամանակ չէր լինի։ Մի սանդուխք կար այնտեղ ոսկէնկար գարդարանքներով, որտեղից կարելի էր բարձրանալ երգեցիկ խմբի կանգնելու տեղը։ Զեսսիկան շտապեց նստարանների տակով կուղէ կուզ մօտ զնալ սանդուխքին. տարաբախտաբը՝ յանկարծ երեաց Դանիէլը, մի երկար, սև բաճկոնի նման բան հագին։ Տեղն ու տեղը կանգ առաւ աղջիկը և շփոթուած ու զարմացած աշքերը տնկել՝ մտիկ էր տա-

լիս իւր հովանաւորի տարօրինակ հագուստին։

Դանիէլն էլ նկատեց աղջկանը և այնպէս շփոթուեց նրա յանկարծական և անսպասելի ներկայութիւնից, որ առաջին անգամը բերանը մի խօսք չեկաւ. աշքերը չուել էր ու շփոթուած տպուշ-ապուշ մտիկ տալիս նրա երեսին։

— Դու, անպիտան, զոչեց Դանիէլն, ուշքը գլուխը հաւաքելով, իսկոյն դուքս, շնուտ։ Քո ինչ տեղն է այս. քեզ նմաններն այստեղ ինչ զործ ունին, այստեղ դալիս են երևելի և բարձրաստիճան անձինք։ Դուքս կորիք, քանի ոչ ոք չէ եկել։ Այդ ինչպէս մտար դու այստեղ։ Մօտեցաւ Դանիէլն աղջկանը և վերջին խօսքերն արտասանեց նրա ականչումը՝ համարեա քչփշալով. մի կողմից խօսում էր և միւս կողմից վախվախելով՝ աշքը դրան կողմն էր ձգել, որ մի գուցէ ներս եկող լինի։

— Մայրս սաստիկ ծեծեց ինձ և տանից դուրս ձգեց, շտապով ասաց աղջիկը. մէկ էլ յանկարծ՝ ձեզ փողոցումը տեսայ և յետեւիցդ եկայ.... մի նեղանաք, խնդրեմ, իսկոյն կթողնեմ, կհեռանամ.... բայց այս ինչ լաւ տեղ է... ասացէք խնդրեմ, ձեր ասած երեւելի մարդիկը ինչ են անում այստեղ, այս

պատուական և հրաշալի տեղումը, այսքանն
ասացէք, ու ես իսկոյն կերծամ:

— Գալիս են աղօթելու, շնչաց Դանիէլը:

— Իսկ ինչ է նշանակում աղօթել, հար-
ցրեց Զեսսիկան:

— Յիսուս ու Քրիստոս, այդ ինչ ասա-
ցիր, աղջիկս, շփոթուեց Դանիէլը. ինչպէս
թէ աղօթել ինչ է նշանակում. այն է նշանա-
կում, որ ոմանք ծունք են դնում այս տախ-
տակակապ տեղերում, մի քանիսը նստում
են. իսկ ինչ կարիք որ նրանք ունին՝ պա-
տօրը (քահանան) ամբիոնի վրայից յայ-
տնում է Աստուծուն:

Վայրենու նման, ապուշ-ապուշ մնացել
էր Զեսսիկան Դանիէլի երեսին նայելով.
մէկ է՝ ակամայից մի ժպիտ խաղաց նրա
տխրադէմ պատկերի վրայ:

— Իսկ ովքեր են ձեր ասած պաստօրն
ու Աստուծ, հարցրեց աղջիկը, և միթէ այդ
երեւի մարդիկը, այդ տիկիններն ու պա-
րոնները բանի կարօտութիւն են ունենում:
Ես այնպէս կարծում էի, թէ այդպիսի մար-
դիկն ամեն ինչ ունին և ինչ որ կամենան՝
կարող են ունենալ:

— Այս, շնոր արա, քո գնալու ժամա-
նակն է. ժամաւորներն ուր որ է՝ կդան

և կդարմանան, երբոր քեզ պէս զզզզուած
ու պատառուած մի կռապաշտ անհաւատ
աղջկայ տեսնեն այստեղ. Տես, այս ահա ամ-
բիոնն *) է, որտեղ ժամերգութեան ժամա-
նակ կամունում է պաստօրն ու քարոզ տա-
լիս. այս նստարանների վրայ նստում են
ժամաւորներն ու լսում պաստօրի խօսքերը.
իսկ այնտեղ, ահա, երգեհոնն է ածում**).
ցանկացողը երգեհոնի նուազակցութեամբ
երգում է: Տեմնում ես, ամեն բան ես քեզ
բացատրեցի, ուրեմն հեռացիր, գնա և միւս

*) Անգլիական եկեղեցին իւր կարգերով ու ծէ-
սերով բաւականին զանազանում է մեր հայ եկեղե-
ցուց. նրանց մէջ ժամերգութիւն կատարում է միայն
կիրակի օրերը. ժամաւորները մերսոց նման ստ-
քի վրայ չեն կամունում.—տաճարի մէջ գպրոցական
նստարանների նման երկար ու ձիգ նստարաններ են
շարուած, ուր որոշ ժամանակներում հանգստանում
են աղօթաւորները: Արեւելեան անկիւնում ամբիոն է
բարձրացած, ուրեղից պաստօրը կամ քահանան քա-
րոզում է Աստուծոյ խօսքը: Քարոզը այս եկեղեցու
անհրաժեշտ արարողութիւններից գլխաւորն է:

**) Երգեհոն ընդունուած է բողոքական և կա-
թոլիկ եկեղեցիներում:

անգամ չհամարձակուիս այստեղ երեալ. քեզ
եմ ասում, երբէք ու երբէք.

— Գիտէք, պարոն Դանիէլ, պատասխա-
նեց խղճալին, այս բաներն ես երբէք ոչ
տեսել և ոչ լսել եմ: Զկայ ալդեօք այստեղ
մի մոռթ անկիւն, որ մտնեմ ու թագնուիմ...

— Ո՛չ ո՛չ, չկայ, ընդհատեց անհամբերու-
թեամբ Դանիէլը. մենք այստեղ քեզ պէս մի
կիսամերկ, զլխաբաց ու բոկոտն հեթանոս
աղջկայ հետ զործ չունինք: Դէհ, շնոր գնա,
հեռացիր. մինչև ժամն սկսելը 15 րոպէ
է մնացել. յանկարծ մէկը ներս շմտնէ ու
քեզ այստեղ տեսնէ. շուտ, շնոր, ասում եմ,
քաշուիր, հեռացիր:

Ծանր ու դանդաղ քայլելն ուղղեց թը-
շուառ աղջիկը գէպի ծիրանեգոյն ներկած
դուռը. գնում էր նա և մէկ-մէկ յետ էր
շրջում ու սիրտը կոտրած՝ մտիկ տալիս Դա-
նիէլին: Վերջինս մնացել էր կամարի տակ
անշարժ կանգնած. նա քիթ ու մոռթ ժո-
ղոված՝ նայում էր աղջկանը:

Նոր ոտքը դրել էր Զեսսիկան նախա-
գաւիթը՝ երբ լսեց, որ մէկը մօտենում է
եկեղեցու դռանը. սատանական՝ նելքել, ճիշտ
եկեղեցու դռանը, լապտերի մօտ ցցուել էր
իւր աշքի զրող ոստիկանը: Արագ-արագ սկսեց

բաբախել խեղճ աղջկայ սիրտը. բոպէաբար
նա դռան յետեւ տեսաւ մի անկիւն, ուր
ապաստանեց ինքը, մինչև որ ոտքը հան-
գստանար և ոստիկանը թողնէր հեռանար:

Եւ ահա, աղօթաւորները միմեաց յե-
տեւից լցուեցին եկեղեցին. կանացի բեհե-
զեայ հագուստների և կերպամների խշչոցը
պարզ լսելի էր նրա ականջին. Զեսսիկան
իւր աշքով տեսաւ ժամ եկող կանացն ու
տղամարդկանցը: Մի անգամ այն աստիճան
վստահացաւ, որ իրան թոյլ տուեց կամաց
շօշափել մօտիցն անց կենող մի տիկնոջ թաւ-
շեայ վերարկուն, և ի հարկէ, ոչ ոք չնկա-
տեց և չկասկածեց, որ դռան յետեւ մի այս-
պիսի աղջիկ է թագնուած: Տեսնում էր Զես-
սիկան, թէ ինչպէս Դանիէլն իւրաքանչիւր
ժամաւորի ցոյց էր տալիս իւր տեղը, ինչ-
պէս նա կասկածուութեամբ աշքելն ածե-
լով կարծես որոնում էր մէկին. մինչև ան-
գամ իւր ականջով լսեց աղջիկը, որ Դանիէլը
մօտ կանչեց ոստիկանին և հարցըց նըան,
թէ չէ տեսել արդեօք եկեղեցու մօտելքում մի
պատուտուած հագուստով աղջիկ թափառելիս:

Ահա հնչեց երգեհոնի ձայնը. Զեսսի-
կան շոգել էր ծնկների վրայ և հարցած ա-
կանջ էր զնում երաժշտութեանն և քաղցը

նուազածութեանը. լալիս էր նա և չէր կարողանում իրան հաշիւ տալ, թէ ինչու է լալիս. իսկ արտասուքն այնքան առատօքէն էր հոտում նրա աչքերից, որ Ֆեսսիկան հարկ չհամարեց սրբել իւր կոշտ ու կոպիտ թաթիկներով. նա զլխարկործ ընկել էր երեսի վրայ ու ձեռներով ծածկել դէմքը. թող այնուհետև թափուի արտասուքը՝ որքան և պէտք է, ամենեին այդ մասին չէր էլ մտածում: Նա անգաղար ողբում ու հառաջում էր:

Փամից յետոյ նրա ականջին հասնում էր զուրս գնացող ժամաւորների խառնաշվոթ զրոյցները:

Նախազաւիթը դատարկուեց, ծիրանաներկ գուռը վահկուեց, ոստիկանը նոյնպէս հեռացաւ. ամենայարմար ժամանակն էր թողնել հեռանալու:

Վշտաբեկ, յոգնած ու տխուր՝ տեղիցը կանգնեց աղջիկը. նա մտածեց, որ ժամանակն է արդէն ձգել այն հրաշալի անկիւնը, որտեղից նրա հողին պարարւում էր հրեշտակային սրբասացութեամբ. և տւաղ, նա պիտի զրկուէր այս խաղաղ ապաստանարանից, որ պէսզի թափառէր քաղաքի մութն ու ցուրտ փողոցներում....

Խորին հառաշանքով, մտամոլոր և յու-

սահատ՝ զուրս եկաւ Ֆեսսիկան և թոյլ քայլերն ուղղեց իրանց բնակարանի կողմը:

Դ.

Առաջին փորձից յետոյ՝ Ֆեսսիկան այնուհետև յաճախ էր զալիս եկեղեցին և նոյն զուան յետեր թագնւում:

Նա չէր կարողանում զսպել իւր եռանդը, և չնայած որ վտանգաւոր քայլ էր արածը՝ բայց և այնպէս մեծ բաւականութեամբ ամեն կիրակի կանգնում էր մութ փողոցի մէջ և սպասում յարմար ժամանակի, որպէսզի կարողանայ աննկատելի կերպով ներս խցկուել եկեղեցին: Ճատ չանցաւ՝ նա արդէն ընտելացաւ ամեն հանգամանքներին. օրինակ, նա դիտէր, թէ որ ժամանակն էր Գանիէլն եկեղեցու ճրագները վառում, երբ էր ոստիկանն եկեղեցու զուան առաջին հըսկում և վերջապէս երբ էր իւր թողնել հեռանալու ամենայարմար միջոցը:

Մէկ-մէկ Ֆեսսիկան չէր կարողանում զըսպել իւր ծիծաղը, երբ տեսնում էր, թէ ինչ-

պէս էր Դանիէլն առօք փառօք նախաղաւթում ձգուած՝ ընդունում ժամաւրներին. հէնց իմանաս՝ նա կանդնած լինէր իւր սըրճարանում և հանդիստ ու հանդարտ յաճախորդներին ընդունելիս:

Արդէն Զեսսիկան չէնքից չնորհքից ճանաչում էր պաստօրին. Բարձրահասակ չոր ու լղար մարդ էր պաստօրը. Սովորաբար նա ժամ էր մտնում կողքի դոնիցը, գլուխը կախ և ըստ երկոյթին՝ մտքի հետ ընկած։ Քահանայի հետ ժամ էին գալիս իւր երկու քաղցրաժպիտ և բարեհամբոյը փոքրիկ աղջկները, Զեսսիկային համարեա հասակակից։ Երկու երեխայքը խիստ շարժում էին Զեսսիկայի հետաքըրբութիւնը. Նրանցից փոքրը շատ զեղեցիկ էր, իսկ մեծը, համարեա իւր տարիքին, մազ ու աշքերը հօիրան նման բոլորովին թուխ։ Բայց աւաղ, որքան մեծ զանազանութիւն Զեսսիկայի և պաստօրի աղջիկների մէջ, այն ինչ սէր, այն ինչ զգուանք էին վայելում նրանք... իսկ ինքը... Երբեմն, երբ քահանայի աղջիկները գալիս անցնում էին Զեսսիկայի կողքով՝ նա աշքերը փակում էր և մտքում այս հարցը որոնում։ արդեօք ինչ են անում այն աղջիկները, երբ որ նստում են իրանց բարձր

նստաբանների վրայ, որտեղ իրաւունք չունի նստելու իւր նման թշուառ, բոկոտն և ցընցոտիներում պատատուած անբախտը... Այսպիսի սրտամաշ և աղէկտուր հարցերի պատասխանը միշտ լինում էր հեկեկանք և հառաշանք։

Դանիէլը կարծում էր, թէ Զեսսիկան չորեքշաբթի օրերն իւր մօտ նախաճաշելու եկած ժամանակ՝ պիտի ձանձրացնէր իրան զանազան հարցմունքներով, և այս մտածմունքն իւր սրտի վրայ քարի նման ծանրացել էր. բայց որքան թեթևութիւն զգաց նա, երբ աղջիկը ոչ մի նշոյլ անգամ ցոյց շտուեց։ Օօօ, այդ մասում Զեսսիկան բանիմաց և հասկացող մէկն էր։ Ընդհակառակը, Զեսսիկայի ցանկութիւնը միայն այն էր, որ Դանիէլը միանգամայն մատհան անէր, թէ ինքն երբ և իցէ եկեղեցում եղած էր. և նրա այս ցանկութիւնը հետզհետէ իրականացաւ։ Միանգամայն ապահովացաւ Դանիէլը, որ այլ ևս ճրագները վառելու ժամանակ՝ սիրտը երկիւղից չպիտի բարախսէր, թէ հէնց հիմի ուր որ է աշքովը կընկնի աղքատ աղջկայ տիրաղէմ և վայրագ կերպարանքը։

Բայց ահա, ամարային պայծառ եր-

կոները մօտ են, և Զեսսիկան տխրութեամբ
զգում է, որ շուտով պիտի վերջանան իւր
հոգեկան բաւականութիւնները, որ ունենում
էր կիրակի օրերը: Այն երկիւղը, թէ մի օր
իւր գաղտնիքներն երեան են գալու՝ իւրա-
քանչիւր անց կացած շարաթի հետ նրա սրբ-
տի վրայ ծանրանում էր: Քանի զնում էր՝
օրերն երկարում էին, արևն ուշ էր մայը
մտնում, և նա այլևս հնարաւորութիւն չպիտի
ունենար օր ցերեկով այնպէս ել ու մուտ
անելու եկեղեցին, որ ոչ ոք իրան չնկատէր:
Մի առանձին հմտութիւն և ճարպիկութիւն
էր հարկաւոր իւր կողմից, որ յարմար մի-
ջոց ճանդած ժամանակ՝ մի կերպ ներս
սպրդէր եկեղեցին: Ի՞նչ անյարսմարութիւն
կարող էր սակայն յետ կառեցնել նրան իւր
հոգեկան բաւականութիւններից, և եթէ այս
միակ կասկածն ու երկիւղը չինէր, թէ այդ-
պիսով ինքը կարող էր վիրաւորել ու վրշ-
տացնել Գանիկլին՝ նա շարունակ կյաճա-
խէր եկեղեցի, մինչև որ մի օր էլ իրան
կրանէին: Միթէ սաստիկ կպատժեն ինձ
միայն նրա համար, որ ես կանգնում եմ
նախագաւթում, բոլորի յետեր և ազօթում,
մտածում էր Զեսսիկան:

Դէմքը սակայն այնպէս բերեց, որ դեռ

ձմեռնային մուժ երեկոները վերջանալուց
շատ վաղ՝ յայտնուեց Զեսսիկայի գաղտնիքը:
Մի կիրակի երեկոյ՝ պատօքի երեխա-
ների գլխումը նստեց սովորականից վաղ ե-
կեղեցի գալ: Եւ ահա, նրանք նկատեցին,
որ ցնցոտիների մէջ փաթաթուած, մի գըլ-
խաբաց և ոտաբորիկ աղջիկ իրենցից առաջ
շտապով սանգուխքը բարձրացաւ և անհե-
տացաւ եկեղեցու նախագաւթումը: Կան-
գնեցին աղջիկները, իրար նայեցին և ահա-
հար, դողահար, երկիւղից մէկ կարմրելով և
մէկ սփրթնելով՝ թէանցուկ արին սիմեանց
հետ ու ընկան իրանց հօք այս նոր ու տա-
րօրինակ ծխականի յետեկից:

Դռնապան Դանիէլը մէջտեղը չէր երե-
ւում, բայց նրանց սրատես աչքերն իսկոյն
նկատեցին մանրիկ ոտների թաց հետքերը,
որ դեռ մնացել էին մաքուր յատակի վրայ:
Մի ըոսէից՝ նրանք գտան խղճալի որբին
զոան յետեր կծկուած:

— Զայն տանք Դանիէլին, զոչեց պաս-
տօքի կըտսեր աղջիկ Վալերիան, պինդ կըպ-
շելով քրոջը:

Լսեց Զեսսիկան այս խօսքերը և ժա-
մանակ շտուեց նորամնց քայլ անելու. նա
զուրս պլծաւ իւր դարանից, կանգնեց նրանց

առաջ և սրտաշարժ դէմքով ասաց. «աղա-
շում եմ, ինձ այստեղից մի հալածէք. ես
մի շատ թշուառ աղջիկ եմ և իմ միակ բա-
ւականութիւնս այս է իմ կեանքիս մէջ: Ես
շատ անդամ եմ տեսել ձեզ, երբ դուք մի
բարձրահասակ պարոնի հետ գալիս անցնում
էիք իմ մօտովս, և երբէք մաքովս չէ անցել,
թէ դուք ուզենայիք ինձ այստեղից դուրս
քշել. Ես դռան յետել կանդնելովս ոչինչ վը-
նաս չեմ տալիս կամ փշացնում. իսկ եթէ
պարոն Գանիէլն ինձ այստեղ տեսնէ՝ նա
այլևս ինձ սուրճ չի խմացնի»:

— Սիրտդ հանգիստ պահիր, սիրելիս. մեր
միտքը բոլորովին այն չէր, որ քեզ հետ վատ
վարուէինք և վիրաւորէինք, մեղմօրէն և
քաղցրութեամբ ասաց մեծ աղջիկը: Բայց
ասա տեսնենք, դու ինչո՞ւ ես գալիս եկեղե-
ղեցի և ինչո՞ւ ես դռան յետել թագնւում:

— Ես երածշտութիւն լսել սիրում եմ,
պատախանեց Զեսսիկան, և մէկ էլ ցան-
կանում էի իմանալ, թէ ինչ է նշանակում
աղօթել և թէ ովքեր են պաստօնն ու Աս-
տուած: Թէպէտ ես զիտեմ, որ այս տունը
շինուած է միայն երեւլի մարդկանց և ձեզ
նման զեղեցիկ ու պմնազարդուած երեխա-
ների համար՝ բայց և այնպէս ես կցանկայի

մի անգամ գոնէ գտնուել հկեղեցումը և
տեսնել, թէ դուք այնտեղ ինչ էք անում:

— Դու կգաս մեզ հետ այնտեղ, ուր մենք
նստում ենք, շտապով խօսեց Վալերիան:—
Իսկ Անին ձեռքը կամացուկ քրոջ ուսին դը-
րեց և աշքով նշանացի ցոյց դուեց Զեսսի-
կայի ճզճած հազուատն ու գզգզուած մա-
զերը... Եւ իրաւ, մի այնպիսի դժուարա-
լուծելի խնդիր էր այս, որ չէր կարող շը-
շփոթեցնել աղջիկներին: Ողորմնլի Զեսսի-
կան այնքան աղտոտ էր և այնպիսի անտա-
նելի հազուատ ունէր, որ անկարելի էր պաս-
տօրի աղջիկներին՝ հրաւիրել նրան իրանց
ծիրանենկար զքեղազարդ տեղն ու կող-
քերին նստացնել: Վալերիան բարկութիւ-
նից գունատուեց. Նա յանդիմանական հայ-
եացը ձգեց իւր մեծ քրոջ երեսին, շտապով
թերթեց ձեռքին բոնած աւետարանն և
ասաց.

— Աննի, ահա այն բնագիրը, որ հայրի-
կը մօտ օրերս մեզ կարդաց. «Եթէ կգայ
ձեզ մօտ ուկի մատանին մատին, զքեզ հան-
գերձներով պմնուած մի մարդ, միենոյն ժա-
մանակը կգայ ցնցոտիներում վաթաթուած
մի թշուառ, և դուք աւելի պատիւ կտաք
զքեզ հազնուած հարուստին ու կասէք, բազ-

առաջ և սրտաշարժ դէմքով ասաց. «աղա-
շում եմ, ինձ այստեղից մի հալածէք. ես
մի շատ թշուառ աղջիկ եմ և իմ միակ բա-
ւականութիւնս այս է իմ կեանքիս մէջ. ես
շատ անդամ եմ տեսել ձեզ, երբ դուք մի
բարձրահասակ պարոնի հետ գալիս անցնում
էք իմ մօտովս, և երբէք մտքովս չէ անցել,
թէ դուք ուզենայիք ինձ այստեղից դուրս
քշել. ես դռան յետեր կանգնելովս ոչինչ վը-
նաս չեմ տալիս կամ փշացնում. իսկ եթէ
պարոն Դանիէլն ինձ այստեղ տեսնէ՝ նա
այլս ինձ սուրճ չի խմացնի»:

— Սիրտդ հանգիստ պահիք, սիրելիս. մեր
միտքը բոլորովին այն չէք, որ քեզ հետ վատ
վարուէինք և վիրաւորէինք, մեղմօրէն և
քաղցրութեամբ ասաց մեծ աղջիկը: Բայց
ասա տեսնենք, դու ինչո՞ւ ես գալիս եկեղե-
ղեցի և ինչո՞ւ ես դռան յետեր թագնում:

— Ես երաժշտութիւն լսել սիրում եմ,
պատասխանեց Ձեսսիկան, և մէկ էլ ցան-
կանում էի իմանալ, թէ ինչ է նշանակում
աղօթել և թէ ովքեր են պաստօնն ու Աս-
տուած: Թէպէտ ես գիտեմ, որ այս տունը
չինուած է միայն երևելի մարդկանց և ձեզ
նման գեղեցիկ ու պճնազարդուած երեխա-
ների համար՝ բայց և այնպէս ես կցանկայի

մի անգամ գոնէ գտնուել հկեղեցումը և
տեսնել, թէ դուք այնտեղ ինչ էք անում:

— Դու կգաս մեզ հետ այնտեղ, ուր մենք
նստում ենք, շտապով խօսեց Վալերիան: —
Իսկ Անին ձեռքը կամացուկ քրոշ ուսին դը-
րեց և աշքով նշանացի ցոյց դուեց Ձեսսի-
կայի ճղճած հազուստն ու գզզուած մա-
զերը... Եւ իրաւ, մի այնպիսի դժուարա-
լուծելի խնդիր էր այս, որ չէր կարող շը-
շփոթեցնել աղջիկներին: Ողորմնի Ձեսսի-
կան այնքան աղտոտ էր և այնպիսի անտա-
նելի հազուստ ունէր, որ անկարելի էր պաս-
տօրի աղջիկներին՝ հրաւիրել նրան իրանց
ծիրանենկար շքեղագարդ տեղն ու կող-
քերին նստացնել: Վալերիան բարկութիւ-
նից գունատուեց. Նա յանդիմանական հայ-
եացը ձգեց իւր մեծ քրոշ երեսին, շտապով
թերթեց ձեռքին բոնած աւետարանն և
ասաց.

— Աննի, ահա այն բնագիրը, որ հայրի-
կը մօտ օրերս մեզ կարդաց. «Եթէ կգայ
ձեզ մօտ ոսկի մատանին մատին, շքեղ հան-
գերձներով պճնուած մի մարդ, միենոյն ժա-
մանակը կգայ ցնցոտիներում փաթաթուած
մի թշուառ, և դուք աւելի պատիւ կտաք
շքեղ հագնուած հարուստին ու կսաէք, բագ-

միք այստեղ, վերին բարձին, իսկ աղքատին կասէք, դու կանգնիր այստեղ, կամ եկ նըստիր իմ ոտներիս մօտ—միթէ ձեր արարքը շի համարուի կեղծաւորութիւն և միթէ դուք չէք դատապարտուի ձեր անարդար խորհուրդների համար։ Այժմ նոյնն է. եթէ այս ողորմելի՞ երեխային շտանենք մեզ մօտ, չնտացնենք մեր կողքին՝ կնշանակէ որ մեր հաւատքը դէպի մեր տէր Յիսուս Քրիստոսն առ երես է և կեղծաւորութեամբ։

—Ես շգիտեմ՝ ինչ անեմ, պատասխանեց յոգոց հանելով Անին. ըստ իս՝ աւետարանի խօսքը շատ պարզ և որոշ է, բայց ես հաստատ համոզուած եմ, որ մեր արարքը հայրիկին դուք չի գայ. եկ, հարցնենք դունապանին։

—Ախ ոչ, ոչ, ընդհատեց Զեսսիկան. ես շեմ ցանկանում, որ մէկն ինձ այստեղ տեսնէք. ես ձեզ խօսք եմ տալիս, որ այսուհետե իմ ոտքս այստեղ չի մտնի, հաւատացնում եմ, որ չեմ գայ. խոստանում եմ, որ էլ չը հետաքրքրուիմ իմանալու, թէ ովքեր են պաստօն ու Աստուած. խնդրում եմ միայն թոյլ տաք գնամ և շարգելէք ինձ։

—Սակայն, աղջիկ, պատասխանեց քաղցրութեամբ և լրջմտօրէն Անին. ընդհակա-

ռակն, մեր պարտականութիւնն է հասկացնել քեզ, թէ ով է Աստուած, եթէ իրաւ է, որ դու այդ չես իմանում. Պաստօրը մեր հայրն է. եթէ կամենում ես՝ գնանք միասին նրա մօտ և հարցնենք, թէ ինչպէս վարուինք քեզ հետ։

—Բայց վայ թէ պարոն Դանիէլն ինձ տեսնէ, այն ժամանակը, հացրեց Զեսսիկան։

—Խորանում բացի մեր հօրից ուրիշ մարդ չկայ, պատասխանեց Անին. նա մեզ կամէ, ինչ անենք. Դու հօրից չես վախենայ։

—Ո՛չ, չեմ վախենայ, պատասխանեց Զեսսիկան և ուրախ-ուրախ պաստօրի երեխաների հետ միասին եկեղեցու միւս կողմովը գնաց մտաւ խորանը։

—Մեր հայրիկն այնքան խիստ մարդ չէ, քաջալելոց Զեսսիկային Վալերիան։

Անին կամաց բաղխեց խորանի դուռը։

—Մոլոք, լսուեց ներսից նրանց հօր մեղմիկ ձայնը։

Ե.

Աղօթագիրքը ձեռքին՝ վառարանի մօտ
փափուկ բազկաթոռի մէջ նստած էր պաս-
տօրը՝ երբ դռան շեմքի վրայ երևացին երեք
աղջիկները։ Քահանան աղօթագիրքը ծա-
լեց։ Ըատ անզամ էր Հեսսիկան իւր դարա-
նից տեսել պաստօրի գունատ և մտախոհ
դէմքը, բայց նա երբէք չէր հանդիպել քա-
հանայի այն խորամուխ և հետամուտ հայ-
եացքին, որ կարծես ներս թափանցեց իւր
հոգու խորքը, տեսաւ իւր սրտի ներսում
կուտակուած վշտերը, դիտեց իւր թշուառ
և անելանելի վիճակը և միանզամից, հա-
մարեա, կարդաց պարզապէս իւր ցաւալից
կեանքի մթագին և աղէկտուր պատմութիւ-
նը։ Դեռ ևս Հեսսիկան չէր խոնարհեցրել
իւր աշքերը, դեռ չէր մատուցել պաստօրին
իւր յարգանաց ողջոյնը՝ մինչ քահանայի բա-
րեհամբոյը դէմքի վրայ խաղաց կարեկցա-
կան և սիրալիք զգացմանց քաղցը արտա-
յայտութիւնը։ Այնքան քաղցը և այնքան
ուշագրաւ էր պաստօրի հայեացքը, որ Հեսսի-
կան չկարողացաւ իւր աշքերը հեռացնել նրա
երեսից։ Քահանայի մարդասիրական զգաց-

մունքը նոր սիրտ և նոր ոգի ներշնչեց
աղջկայ մէջ։

Պաստօրի երեխաներն անմիջապէս թո-
ղին Հեսսիկային գուան չեմքի վրայ, մօտե-
ցան իրանց հօրը և միմեանց ընըանից խօս-
քը խլելով, ոտ ու ձեռք շարժելով՝ շտապ-
շտապ սկսեցին պատմել, թէ ինչ դժուար
դրութեան մէջ ընկան իրանք՝ երբ աղջկանը
դտան դրան յետեր թագնուած։

— Մօտեցիր ինձ, զաւակս, ասաց պաս-
տօրը։

Մի քանի քայլ արեց Հեսսիկան գորգի
վրայ, մօտեցաւ քահանային, կանզնեց բազ-
կաթոռի հանդէպ և ձեռքերը խաշած՝ նայեց
ուղղակի նրա աշքերին։

— Անունո՞ւ ինչ է, որդիակ, հարցըց պաս-
տօրը։

— Հեսսիկա, պատասխանեց աղջիկը։

— Հեսսիկա, ինչ քաղցը անուն, ժպտաց
պաստօրը։

— Իմ մայրս առաջ թատրոն էր խաղում,
ասաց Հեսսիկան, ես էլ մնջկատակի (պանտօ-
միմա) ժամանակ վհուկի դեր էի կատարում,
այդ անում էի այն ժամանակ, որ դեռ փոքր
էի, դեռ չէի մեծացել ու այսպէս տղեղա-
ցել։ Մայրս ասում էր, որ եթէ ես մեծա-

նամ ու նորից գեղեցկանամ՝ դարձեալ կը
մասնակցեմ թատրոնական ներկայացումնե-
րին. բայց ի հարկէ ես դեռ շատ կսպա-
սեմ մինչև այդ օրը: Դուք էք պատօրն,
այնպէս չէ:

—Այո՛, պատասխանեց ժպտալով քա-
հանան:

—Իսկ ի՞նչ է նշանակում պատօր, հար-
ցը քեսսիկան:

—Պատօր նշանակում է ծառայ, աչքե-
րը մտախոհութեամբ կրակին ձգելով՝ պա-
տասխանեց նա:

—Հայրիկ, զարմացած բացազանշեցին
Անին և Վալերիան. բայց նոյն ըոպէին՝ Զես-
սիկան հարցասիրական ակնարկ ձգելով պա-
տօրի երեսին՝ ասաց.

—Ասացէք, խնդրեմ, դուք ում ծառան էք:

—Ես ծառայում եմ Աստծուն և մարդին,
պատասխանեց նա, ձայնը բարձրացնելով. —
Զեսսիկա, ես նմանապէս և քո ծառան եմ:

Գլուխը բացասարար շարժեց Զեսսի-
կան և աչքերն ածելով սենեկի և պատօրի
աղջիկների պաճուճանքների վրայ՝ բարձրա-
ձայն ծիծաղեց: Զեսսիկան վկանզնած տեղը
դողաց, ուսերի շարժումով բարձրացնելով
իւր հնոտիքը մերկ պարանոցի վրայ՝ կար-

ծես դուրսը մոնշացող սառնամանիքի տակ
էր կանգնած: Զեսսիկայի մանկական, սըր-
տամմլիկ ծիծաղը շանթեց պաստօրի բարի
սիրտը, և նրա աչքերը արտասուրով լցուեցին:

— Իսկ ով է Աստուած, բոպէական լուու-
թիւնն ընդհատեց Զեսսիկան: Մայրս ուրախ
տրամազրութեան մէջ եղած ժամանակ՝ եր-
բեմն երբեմն ասում էր. «Աստուած ողոր-
մած է»: Ասացէք, խնդրեմ, պարոն պա-
տօր, դուք ճանաշում էք Աստծուն:

Դեռ չէր պատասխանել քահանան՝ որ
խորանի դուռը բացուեց, և շեմքի վրայ երե-
ւաց Դամիկէլը: Առաջին ըոպէում նա հան-
գիստ սըտով նայեց ներկայ եղողներին. բայց
վերջը գերեզմանական դալուկը ծածկեց նրա
լուրջ գէմքը, և նա թիկնեց դռանը, որ փոքր
ինչ շունչ առնէ և այս անակնկալ շփոթից
ազատուի. ոչ մի խօսք չկարողացաւ արտա-
սանել Դամիկէլը. պապանձուեց մխաց: Զեսսի-
կան նմանապէս իւր կողմից սարսափահար
եղաւ և ապուշ-ապուշ նայում էր շուրջը,
կարծես նա ուզում էր՝ կամ կորչել հեռա-
նալ, և կամ մի տեղ թագնուել:

Բոպէական լուութիւնն ընդհատուեց
պաստօրի հետեւեալ խօսքերով.

— Զեսսիկա, ասաց նա, իմ ամպիոնի

տակ մի ծածուկ տեղ կայ. ոռւ կմտնես այն-
տեղ, կնսուս և քարոզի ժամանակ իմ աշքա
քեզ վրայ կլինի: Խելօք եղիր, ուշադրու-
թեամբ լսիր, և զու քիչ ու շատ տեղեկու-
թիւն կստանաս Աստուծոյ մասին: Դանիէլ,
տարէք այս երեխային և կանգնացըէք նրա-
տարաննեզի դիմացը, ամբիոնի սանդուխքի
մօտ:

Ճեսսիկայի բերանն ուրախութիւնից մնա-
ցել էր բաց, նրա երջանկութեանը շափ չկար,
երբ յանկարծ ինքը բուսաւ տաճարի մէջ,
ոսկեփայլ երգեհոնի դիմաց, որտեղից հնչում
էր ներդաշնակ և հոգեթրթիռ երաժշտութիւ-
նը: Իրանից ոչ հեռու, աշքերը տնկած՝
քաղցրաժպիտ իւր վրայ էին նայում Անին ու
Վալերիան: պաստօրի մեծ աղջիկը խորին ու-
շադրութեամբ դիտում էր Ճեսսիկայի ամեն
մի շարժմունքը, իւր ազգեցիկ հայեացքով
հասկացնում էր նա անտէր որբին, թէ երբ
էր հարկաւոր ծունը դնել և երբ ոտքի կան-
գնել. իսկ Վալերիան բաւականանում էր միայն
քաղցը ժպիտներով, երբ ամեն անգամ գլ-
լոււլը բարձրացըած ժամանակ աշքը ձգում
էր Ճեսսիկայի երեսին:

Միանգամայն երջանիկ էր Ճեսսիկան,
իւր այդ երջանկութիւնն երբէք նրան չէր

շփոթում: Այդտեղի աղօթաւոր երեելի տի-
կիններն ու պարոնները նրա աշքում ոչնչով
չէին զանազանուում նրանցից՝ որոնց ինքը,
վհուկի դեր կատարելիս՝ տեսել էր թա-
տրոնումը: Իսկ Ճեսսիկայի ուշք ու միտքն
ամբողջապէս կլանել էր պաստօրը, որ շուտ
շուտ մտիկ էր տալիս իրան: Անկարծիք,
Ճեսսիկայի համար դժուար էր խօսքերից
մի բան հասկանալ, բայց քահանայի քարո-
զը խիստ դուք էր գալիս աղջկանը: Պաս-
տօրի քնքոյց ու փափկանչիւն ձայնը շատ
հաճելի էր Ճեսսիկային, մեծ ուրախութիւն
էր նրա սրտի համար, երբ իրան նայելու
ժամանակ քահանայի բարեհամբոյը դէմքի
վրայ ինքը տեսնում էր քնքութեան, տը-
խրութեան և մեծ համակրութեան արտա-
յայտութիւններ:

Ըուտ-շուտ Դանիէլը տհաճ դէմքով և
սրտի անհանգստութեամբ գալիս անցնում
էր Ճեսսիկայի մօտով, իսկ վերջինս չէր էլ
նկատում դռնապանի ներկայութիւնը. նրա
բոլոր մտածութիւնը, նրա եռանդալից ցան-
կութիւնը միայն այսքանն էր, թէ ովքեր
էին պաստօրն և Աստուած:

Զ.

Ժամը զուրս եկաւ, Պատորն իշաւ ամբիոնից նոյն ըոպէին՝ երր Դամիէլն շտապում էր զուրս անել Զեսսիկային։ Քահանան բռնեց երեխայի ձեռքից և բոլոր ժամաւորների ներկայութեամբ՝ առաւ մտաւ խորանը։ Անմիջապէս նրանց յետեից ներս եկան Անին և Վալերիան։ Ջատ յոդնած էր պատօրը, գոյնը բոլորովին թռել էր. նա կանգնացրեց Զեսսիկային իւր առաջ և ջարդուած ու վաստակած՝ ընկաւ բազկաթոռի մէջ. Փոքը ինչ հանգստանալուց յետոյ՝ նա գլուխը դրեց ձեռների վրայ և ցած ձայնով ասաց. «Ո՞վ ծէր, ահա կանգնած է առջևկ քո հօտի զառներից մէկը. սովորյրու և օգնիր ինձ արածացնել քո ոշխալները . . .

— Զաւակներս, շարունակեց պատօրը, վաստակած դէմքի վրայ սիրալիք ժպիտը խաղացնելով. հեշտ բան չէ Աստծոն ճանաշելը, բայց մեզ մի բան է յայտնի. այս այն է, որ նա, մեր հայրը՝ է և իմ հայրը և ու հայրը, Զեսսիկա. նա քեզ սիրում է, նա քեզ համար աւելի է հոգում՝ քան թէ իմ քնքուշիկներիս համար—այ, սրանց համար

եմ ասում, Զեսսիկա, որ քո առաջիղ կանգնած են։ Ասաց պաստօըը, նայեց իւր երեխաներին և ժպտաց. նրանք էլ փոխադարձաբար ժպտապէմ մտիկ տուին իրանց հօրը։ Են ինչ երշամիկ ժպիտ էր, որ արտայայտուեց պաստօրի երեխաների պատկերի վըրայ։ Զգաց, հասկացաւ Զեսսիկան այն երշանկալիք ժպիտը, և խորին տրտմութիւնը բռնեց նրա սիրտը։ Ամբողջ մարմնով դողաց խեղճ աղջիկը. նա ինքն իրան զսպեց, բայց մեզմօրէն և ցաւագին հառաջանքով այս խօսքերն արտասանեց.

— Ես երբէք հայր չեմ ունեցել։

— Աստուած ինքն է քո հայրը, քաղցրութեամբ պատասխանեց պաստօըը, նա շատ լաւ գիտէ քո դրութիւնը, որովհետեւ նա ամենաղէտ է։ Մենք նրան չենք կարող տեսնել, բայց բաւական է որ հետը խօսենք՝ և նա մեզ կլսէ. մենք կարող ենք խնդրել նրանից՝ ինչ որ մեզ պէտք է»։

— Միթէ նա ինձ թոյլ կտայ իւր հետ խօսել՝ ինչպէս որ թոյլ է տալիս այս զեղեցիկ երեխաներին, որ այսպէս ձքեղ հադնուած են, հարցըց աղջիկը աշքը վախվախելով՝ ձգեց իւր աղտոտ ոտների ու պատառոտուն ցնցոտիների վըրայ։

Այս, ասաց պատորը և ժպտաց, միաժամանակ մի խոր հառաշանք դուրս բղխեց նրա սրտից: Այս, զաւակս, շարունակեց պատորը. դու իրաւունք ունիս հէնց այս ըռպէին խնդրել նրանից՝ ինչ որ ցանկանում ես:

Զեսսիկան աշքերը չուց և սկսեց այս ու այն կողմը նայել. կարծես նա սենեկի քունջ ու պուճախներում նստծուն էր որոնում և ուզում էր տեսնել նրան: Յետոյ գլուխը կռացրեց, ձեռների վրայ դընց, ինչպէս որ մի քանի ըռպէ առաջ պատորից տեսել էր, և լորիկ մըմունցով այս խօսքերն արտասանեց. «Աստուած իմ, ախ, որքան ցանկանում եմ Քեզ տեսնել. աղաչում եմ, ով ծէր, վճարիր պարոն Դանիէլին իւր տաք-տաք սուրճի արժէքը, որ նա ինձ խմացնում է»:

Լսեցին այս խօսքերը Անին և Վալերիան և զարմացան մնացին. իսկ պատորի աշքերն արտասունքով լցուեցին, և նա լրացրեց Զեսսիկայի առաջին անդրանիկ աղօթքը՝ դոչելով. «Ամէն»:

Ե.

Դանիէլը ժամանակ չգտաւ Զեսսիկայի հետ խօսելու. մինչև որ նա կսպասէր, որ պաստօրը թողնէր հեռանար՝ աղջիկը դուրս եկաւ կողքի դռնից և անհետացաւ, ուստի Դանիէլն ստիպուց սպասել նրան չորեքշաբթի առաւօտը տեսնելու: Ճատ դուրս եկաւ Զեսսիկայի մաշուած պատկերը՝ երբ վերջինս աշքը տնկած սուրճի սեղանին էր նայում ամենայն ուշադրութեամբ: Իսկ Դանիէլը վաղուց արդէն վճռել էր արգելել աղջկանը ոչ միայն իւր մօտ գալու, այլ և ոստիկանով սպասնալու, եթէ նա համարձակուէր միւս անգամ եկեղեցուն մօտ գնալու: Նա մտքումը դընել էր ամենայն աշալըզութեամբ հսկել աղջկայ յիտեկից: Սակայն մինչ Դանիէլը բերան չէր բաց արել և ոչ մի խօսք չէր արտասանել՝ Զեսսիկան ներս ընկաւ սրճատունը և նստեց իւր սովորական տեղը՝ կործ արած զամբիւղի վրայ:

— Պարոն Դանիէլ, ասաց աղջիկը, վճարեց Աստուած ձեր ինձ խմացրած սուրճերի գինը:

— Ի՞նննշ . . . վճարեց . . . ինննձ . . .

Աստուած . . . հարցրեց Դանիէլը զարմացած
— Ոչ . . .

— Ուրեմն նա կվճարէ, գլուխը հաս-
տատապէս շարժելով՝ ասաց Ձեսսիկան. կաս-
կած մի տանէք ձեր փողի համար, պարոն
Դանիէլ. ես Աստծուն շատ խնդրեցի, և պա-
տօրն ինձ ասաց, որ Աստուած անպատճառ
կկատարէ իմ խնդիրս:

— Ձեսսիկա, խստութեամբ հարցրեց
Դանիէլը, միթէ դու պատօրին բան ասել
ես իմ սրճատան մասին:

— Ոչ, պատասխանեց ուրախ ժամկետով
աղջիկը. կիրակի օրուանից սկսած՝ շատ ու
շատ անգամ եմ խնդրել Աստուծուց, և նա
անկարծիք, եթէ ոչ այսօր՝ գոնէ վազը ձեզ
կվճարէ:

— Ձեսսիկա, շարունակեց քաղցրու-
թեամբ Դանիէլը. ես տեսնում եմ, որ դու
խելացի աղջիկ ես, ուրեմն ուշադրութեամբ
լսիք՝ ինչ որ հրամայում եմ. երբէք ոչ ոքի
բան չասես իմ և սրճատանս վերաբերու-
թեամբ. որովհետեւ մեր եկեղեցին յաճախող-
ները բոլորեքնան բարձր շրջանից են, նըանք
ամենքն երեելի մարդիկ են, և կարող են
իրանց համար անպատճութիւն համարել, որ
ես, իրանց ժամկոշը, խանութ եմ պահում.

կարող է պատահել, որ եթէ նըանք այդ
բանն իմանան՝ էլ չկամենան ինձ պա-
հել իրանց եկեղեցումը, և ես կզրկուեմ
իմ արդիւնաւոր պաշտօնից, ուրիշ խօսքով
ասել՝ մեծ փողից:

— Եթէ այդպէս է, հապա էլ ինչո՞ւ էք
պահում այն սրճարանը, հարցրեց Ձեսսիկան:

— Մ'իթէ դու չես տեսնում, որքան շատ
փող եմ աշխատում ես ամեն առաւօտ, ա-
սաց նա և շարժեց փողով լիքը քաթանի
տողըրակը. ախար ես այս գործով տարե-
կան մեծ փող եմ աշխատում:

— Իսկ այդքան փող ձեր ինչին է հար-
կաւոր. Աստծուն էք տալիս, հա՞:

Դանիէլը ոշինչ շպատասխանեց. Ձես-
սիկայի հարցմունքը սուր դամսակի նման
ցցուեց նըա սրտումը. «Հը՛, իւր ինչին է
պէտք այդքան փողը»: Յակամայից ներկայա-
ցաւ Դանիէլի աշքին իւր աղքատիկ սենեա-
կը, որի մէջ ինքը բնակում էր մէն-միայ-
նակ. երկաթուղու կամբջից բաւական հեռու,
առանց սարգ ու կարգի և յարմարութիւն-
ների: Մի հատ գրամարկղ միայն դրուած
էր նըա սենեկի մէջ, ուր պահուած էին խնայ-
ողական գանձարանից տուած գրքոյկը, տո-
կոսով տուած փողերի ապահովագրերը և մի

փոքրիկ տոպլակով ոսկի դրամ։ ահա այսքանն է նրա ստացուածքը, որի համար այսշափ տանչուել էր և տանջւում ու դաղբում էր կիրակի, տօն և լի օրեր չհարցրած։ Հկարողացաւ մտաբերել Դանիէլը, թէ ինքը մի օր՝ մի աղքատի ողորմութիւն արած լինէր, բացի Զեսսիկային տուած սուրճի տականքից և չորացած հացից, որի համար աղջիկը Աստուծուց ինդրեւմ էր վճարել իրան . . .

Դանիէլի հազը բռնեց, կարծես այդպիսով մաքրում էր իւր կոկորդը, և նա աշքերը տրորեց, ձգձգուեց ու դողդոցուն մատներով հանեց տոպլակից մի հատ փոքր արժէքի դրամ և կոխեց Զեսսիկայի բուռը։

— Ո՞չ, ո՞չ, պարոն Դանիէլ, ասաց շտապով Զեսսիկան։ ես չեմ ուզում, որ դուք ինձ փող տաք. իմ ցանկութիւնս այն է, որ Աստուած վճարէ ձեզ իմ պարտքը։

— Այն, այն . . . ըլը . . . ի հարկէ, ի հարկէ, Աստուած ինձ կվճարէ . . . մըմոաց Դանիէլը . . . շուտով կմօտենայ ընդհանուր հաշուէտութեան օրը . . .

— Միթէ Աստուած ընդհանուր հաշուի օրեր ունի, հարցրեց Զեսսիկան. օհ, ես թատրոնում վհուկի դեր կատարած ժամանակս այդ հաշուէտութեան օրը շատ էի սիրում։

իսկ դուք գոհ կմնաք այդ օրից, թէ ոչ, հարցրեց Դանիէլին աղջիկը։

Դանիէլը խնդրեց Զեսսիկային շարունակել իւր նախաճաշիկը, իսկ ինքն սկսեց որոճալ, ծանը ու թեթև անել իւր մտքում աղջկայ միամիտ հարցմունքներով կարթեցրած ինդիրը։ Դանիէլի խղճմտանքը քշքում էր իւր ականջին, թէ ինքը գոհ չի մնայ, եթէ Աստուած պահանջելու լինէր նրանից իւր գործերի և կենցաղի հաշիւր։

Հեռանալիս, երբ Դանիէլը չուվեցաւ տուած փողն յետ վերցնել՝ Զեսսիկան ասաց.

— Պարօն Դանիէլ, եթէ դիտենայի, որ դուք ինձանից չէիք նեղանայ և ինձ չէիք մեղաղը՝ ես ուրախութեամբ կցանկայի վաղն էլ գալ ձեզ մօտ սուրճ խմելու, ի հարկէ փողով, ինչպէս անում են ձեր յաճախորդները. դուք ապահով եղէք, եկող կիրակին ես ոչ մի խօսք չեմ ասի պատօրին ձեր սրճարանի վերաբերութեամբ. դուք բոլորվին երկիւզ մի անէք։

Զգուշութեամբ փաթաթեց և ամրացրեց Զեսսիկան փողը իւր ցնցոտիքի ծայրումը, և ուրախ ու զուարթ դուքս թռաւ կամրջի տակից ու անհետացաւ Դանիէլի աշքից։



Նոր էր մտել Զեսսիկան իրանց կացարանի փողոցը՝ մէկ էլ տեսաւ, որ բոլոր այն տեղի բնակիչները հաւաքուել էին մի բարձրահասակ պարոնի շուրջը և մեծ իրարանցումի մէջ էին։ Մրան նրան արմունկով հրելով՝ ճղեց պատռեց աղջիկը բազմութիւնը, ճանաշեց պաստօրին և մօտեցաւ նորան։ Ուրախութիւնը փայլեց պաստօրի երեսին՝ երբ նա տեսաւ Զեսսիկային։ Առաւ աղջիկը, պաստօրին յառաջ ընկաւ, մտաւ ցեխոտ բազը, այնտեղից էլ երկուսով միասին ուղղակի գոմի միջից բարձրացան կիսաւեր ճոճուան սանդուխքով վերև, մտան ձեղնայարկը (չարդախը)։ Ի՞նչ տեսաւ այնտեղ քահանան, կրդմինտրները ջարդ ու փշուր թափուած, միակ լուսամտի ապակիները կոտրատուած, տեղը փալամներ խրոտած և կեղտոտ թղթեր կը պցըրած։ Մի հին ժանգոտուած վառարանի մօտ աղիւսների վրայ դրուած էին մի քանի հատ տախտակի կտորտանք, որոնք նստարանի տեղ էին գործածում։ Այդ տախտակի կտորների վրայ նստեց ինքը պաստօրը, իսկ Զեսսիկան նստեց նրա դիմացը, գետնին։

— Զեսսիկա, տրտմութեամբ ասոց պատօրը, այստեղ ես դու բնակւում։

— Այն, այստեղ, պատասխանեց Զեսսիկան, բայց մի օր, երբ ես թատրոնում վհուկի դեր էի կատարում և մայրս ներկայացնում էր՝ մենք աւելի լաւ սենեակ ունէինք։ Մենք գարձեալ լաւ կապրինք՝ եթէ ես մեծանամ և այնքան դեղեցկութիւն ունենամ, որ կարողանամ մօրս պէս թատրոնում խաղալ։

— Որդեակ իմ, ասաց պաստօրը. ես եկել եմ մօրդ համոզեմ, որ թոյլ տալ քեզ ուսանել գիւղական դպրոցում։ Ի՞նչ ես կարծում, թոյլ կտայ, թէ ոչ։

— Ո՞չ, պատասխանեց Զեսսիկան. մայրս ինձ ասել է, որ երբէք թոյլ չի տայ կարդալ-զրել սովորել և եկեղեցի գնալ. նրա ասութեամբ՝ այդ բաներն ինձ կփճացնեն և բոլորովին կղարձնեն անպէտք։ Բայց բանն այս է, պարոն պաստօր, որ մայրս ձեր եկեղեցու մասին ոչինչ չգիտէ. ձեր եկեղեցին շատ հեռու է այստեղից, և ոչ մի օր մայրս ինձ այն կողմերը չէ պատահել։ Այս էլ կայ, որ կիրակի օրերը մայրս միշտ հարբած է լինում։

Եյնքան անմեղութեամբ, այնքան պարզ ու հանդարտ էր խօսում իսեղճ երեխան, որ

կարծես՝ ասածները շատ սովորական և բը-
նական երեսյթներ լինէին։ Սակայն պաս-
տօրի սարսուռը բռնեց, լոիկ-մնջիկ աշքը
տնկած՝ նայում էր նա կոտրած լուսամտի-
ժակից ամպամած երկնքին։ Վերջապէս նա
յուսահատութեամբ այս խօսքերն արտա-
սանեց։

— Աստուած իմ, ես այստեղ ի՞նչ կարող
եմ անել։

— Ոչինչ, պատասխանեց Զեսսիկան. դուք
միայն իրաւունք տուէք ինձ կիրակի օրերն
եկեղեցի գալ և հետո խօսեցէք Աստուծոյ
վրայ։ Եթէ ինձ ձեր երեխաների նման չքեզ
շորեր ընծայէիք՝ մայրս իսկոյն կտանէք, գրաւ
կդնէք և օղի կառնէք։ Իմացէք ուրեմն, դուք
ուրիշ ոչինչ չէք կարող ինձ համար անել։

— Ուր է մայրդ, հարցրեց պաստօրը։

— Երեի որեէ տեղ կերուխումով է
զբաղուած։ Նա երկու-երեք օրից առաջ
տուն չի գայ։ Նա ձեզ լսողը չէ։ Մի անգամ
մի միսիօնէք եկաւ այստեղ. այնպէս հրեց
մայրս և սանդուզքից ցած գլուխեց, որ քիչ
մեաց՝ սպանում էր։ Թատրոնում խաղացած-
ժամանակ՝ բոլորը նրան անուանում էին շա-
րասիրտ կին, և ոչ ոք չէք համարձակում
մի խօսք ասել նորան։

Պաստօրը լռել էր։ Մտատանչութեան
թախիծն երեսին՝ աշքի տակով զննեց նա
սենեակն իւր սարք ու կարգով, և խիստ ցա-
ւեց ու խղճաց աղջկայ վրայ։ Պրութիւնը
յուսահատական էր. Վերջապէս նա խօսեց։

— Զեսսիկա, ով է այդ Դանիէլը։

— Ո՞հ, պատասխանեց խորամանկ դէմ-
քով աղջիկը, Դանիէլն իմ բարեկամս է, որ
ինձ սուրճ է տալիս։ Միթէ, պարոն, դուք
չգիտէք, ովքեր են բնակլում Լոնդոնում։

— Ի հարկէ ոչ, պատասխանեց պաստօ-
րը Ժպտալով։ Ի՞նչ է, միթէ նա սրճատուն,
կամ խանութ ունի, ուր սուրճ են խմում։
Զեսսիկան գլուխը շարժեց. նա սիրտ
շարեց բան ասելու, լռեց։

— Ի՞նչ արժէ մի բաժակ սուրճը, հարցրեց
պաստօրը։

— Ամբողջ բաժինն արժէ մի պեննի *
շտապով պատասխանեց Զեսսիկան, բայց
կարելի է և կէս բաժին առնել. միենոյն տե-
ղում կարելի է զնել մի պեննու կամ կէս
պեննու կարկանդակ և սպիտակ հաց։

— Իսկ կարկանդակներն ու սուրճը լան
են լինում, Ժպտալով հարցրեց պաստօրը։

*) Պեննին արժէ մօտաւրապէս 4 կոպէկ։

— Ամենագլխաւոր տեսակից, շրթունքները ճպճպացնելով՝ ասաց աղջիկը:

— Լաւ, ասաց պաստօրը. կասես ուրեմնքո բարեկամին, որ ամեն առաւօտ քեզ տայմի ամբողջ բաժին սուրճ և մի պեննու սպիտակ հաց. ես գինը լրիւ կվճարեմ իրեն՝ երբ որ կբարեհաճի ինձ մօտ զալ փողն ուզելու:

Տեսսիկայի դէմքը պայծառացաւ միայն մի ըոպէ. այնուհետև տրտմութիւնը պատեց երեսը. յանկարծ մտաբերեց Դանիէլի գաղտնիքը. նրա շրթունքները սկսեցին դողդողալ, և նա յուսահատութեամբ գոչեց.

— Ներեցէք, պարոն, ես հաստատ հաւատացած եմ, որ Դանիէլը ձեզ մօտ չէ կարող դալ... այն, հաստատ գիտեմ, որ չէ կարող. տեղը շատ հեռու է և յաճախորդները շատ շատ են.... ոչ, նա երբէք չի դայ ձեզանից փող ստանալու:

— Ուրեմն, լսիր, տես ինչ կասեմ, Տեսսիկա, ամեն կիրակի ես քեզ մի շիլինդ^{*)} կտամ. եթէ դու ինձ խօսք կտաս, որ կտանես կտաս բարեկամիդ: Հասկացիր, որ եթէ ինձ խարես՝ ես խսկոյն կիմանամ:

*) Արժէ մօտ 50 կոպէկ:

Ասաց պաստօրը և նրա բազմափորձ և խորամուխ հայեացքը շեշտուեց աղջկայ աշքերի մէջ. — միենոյն բարեհամբոյր և կարեկցալիր ժպիտը խաղաց քահանայի ազնիւ դէմքի վրայ:

— Այլ ես ինչ բանով կարող եմ քեզ օգտակար լինել, հարցրեց պաստօրը:

— Ուրիշ ոչինչ չէ հարկաւոր ինձ. դուք միայն խօսեցէք հետո Աստուծոյ վրայ, պարոն պաստօր:

— Այժմ ես միայն մի բան կասեմ քեզ Աստուծոյ վերաբերութեամբ. եթէ ես քեզ տանեմ ինձ մօտ, որ մեր տանը մնաս և իմ երեխաների հետ ապրես՝ այն ժամանակ դու մաքուը կհազնուես և մաքուը էլ կմնաս: Աստուած մեզ ստեղծել է նրա համար, որ իւր հետ միասին ապրինք երկնքումը. իսկ մենք այնքան մեղաւոր գտնուեցինք, որ երկնքի համար անպիտան համարուեցինք: Այն ժամանակ նա ուզարկեց իւր միածին Ուզուն, որ գար մեր մէջը բնակուէք, մեռնէք մեր մեղքերի համար, որպէսզի այդ ճանապարհով մեզ զարդարէք նոր հանդերձներով և պատրաստէք մտնել իւր յաւիտենական կայանը — իւր հանդերձեալ կեանքը: Ուստի եթէ դու Աստուծուց բան լինդք-

լու լինիս՝ աղօթքիդ մէջ այս խօսքերն աւելացրու. «Ի սէր Յիսուսի Քրիստոսի»: Նա ինքն՝ Յիսուս Քրիստոս է որդին Աստուծոյ:

Այս խօսքերից յետոյ, պաստօրն զգուշութեամբ իջաւ սանդուխքից: Զեսսիկան ոտարբիկ ուղեկցում էր նորան: Նա առաջնորդեց քահանային կարճ ճանապարհով և հանեց քաղաքի գլխաւոր փողոցներից մէկը: Պաստօրը մնաս բարկ ասաց աղջկանը՝ աւելցնելով. «Աստուծ օրհնէ քեզ, որդեակ իմ»: Այնպիսի եղանակով ասաց նա այս խօսքերը, որ իսկոյն թափանցեցին մինչև Զեսսիկայի մանկական սրտի խորքը: Բաժանուելիս՝ պաստօրը դրեց աղջկայ բուռը մի արծաթ զրամ, որ բաւական էր նորան երեք օրուայ նախաճաշիկի համար, և Զեսսիկան համարելով իրան շատ հարուստ՝ վերադարձաւ իւր աղքատիկ կացարանը:

Հետևեալ առաւօտը Զեսսիկան եկաւ Դանիէլի մօտ՝ յաճախորդի նման, հպարտ հպարտ գլուխը բարձր բռնած և կանխիկ վճարեց նորան ամբողջ արծաթը:

Դանիէլը լսելով աղջկայ պատմութիւնը՝ փոքր ինչ շփոթուեցաւ: Նա վախեցաւ, թէ գուցէ պաստօրը ցանկանում էր այդպիսով գտնել փոքրիկ աղջկայ այցելած սրճարանը,

որով և կրացուէր իւր դադտնիքը: Բայց և այնպէս, նա սիրտ շալեց արգելել աղջկանը նախաճաշելու համար իւր մօտ գալու: Յամենայն դէպս, նա եկաւ այն համոզմանը, որ եթէ իւր գաղտնիքը բացուէր՝ ինքն աւելի շուտով կզոցէր սրճատունը, քան թէ կվիրաւորէր եկեղեցու երեելի ժողովրդականների սիրտը: Բայց մինչդեռ այդպիսի բան չէ պատահել՝ յիմարութիւն էր իւր կողմից օր առաջ զանազան միջոցների դիմել և այդպիսով զըկել իրան մշտական օրինաւոր եկամուտից:

Ու.

Եթէ մարդ հետեւելու լինէր՝ կտեսնէր ամեն ժամանակ, որ մի փոքրիկ, ոտարբիկ ու գլխաբաց աղջիկ արծակ համարձակ գնում էր այն եկեղեցին, ուր սովորաբար աղօթելու էր ժողովւում Լոնդոնի բարձր դասակարգը: Իւր սովորական տեղը կանգնելուց առաջ՝ այդ աղջիկը հագնում էր պաստօրի մեծ աղջկանը մի օր պատկանած վերաբ-

կուն և ծածկում էր նրա գլխարկը, որ Դանիէլի սկ կապայի հետ միասին պահում էր եկեղեցու սենեակումը։ Այս հագուստով Զեսսիկայի պատին աւելի էր բարձրանում ժամաւորների աշքում։ Ըստ երեսութին՝ պատօրն իւր ժողովրդականների մէջ Զեսսիկայից աւելի ջերմեռանդ և ուշագիր ծխական չունէր, որովհետեւ շատ ցաւ էր թւում նրա համար՝ իթէ չէր տեսնում աղջկայ հալ ու մաշեղած և գունատուած երեսը։

Ժամից յետոյ՝ պատօրն ամեն ժամանակ համարեա խօսակցութիւն էր ունենում խորանումը Զեսսիկայի հետ, և ի հարկէ, նրա զըոյցները տեսում էին մի քանի բոսէ, այն էլ՝ Սուրբ գրքի հատուածներից, ըստ որում նա պաշտօնակատարութիւնից յետոյ շատ յոգնում էր։ Դեռ ներս չէր եկած լինում Զեսսիկան՝ որ նրա խոստացած շիլինդը պատրաստ գրուած էր լինում։ Ժամ առաջ պատօրի աղջիկներն շտապում էին իւր ժամանակին դրամը գնել վաւարանի վրայ։ Զեսսիկան էլ, իւր տուած խօստման համաձայն, պիտի տանէր յանձնէր Դանիէլին, իւր շաբաթականնախաճաշիկն ապահովելու համար։

Այսպէս անցան միմեանց յետեից շատ շաբաթներ։ Մ' ի կիրակի օր, պատօրն, ըստ

սովորութեան, բարձրացաւ ամբիոն և նկատեց, որ Զեսսիկայի տեղը թափուր է, իսկ շիլինդը հէնց մնացել էր խորանումն անձեռնմխելի։ Սոյն օրից սկսած Դանիէլն էլ ամեն առաւօտ անհանգիստ սրտով սպասում էր աղջկանը։ Ել չկար Զեսսիկան, նա այլ ևս չէր երեսում իւր սովորական անկիւնում, չէր նատում իւր կողքին և նախաճաշիկը ծնկանը դրած՝ չէր անհանգիստ անում իրան անհամար տարօրինակ հարցմունքներավ։ Բանից դուրս եկաւ, որ Զեսսիկայի բացակայութիւնը սպասածից աւելի զգալի եղաւ Դանիէլի համար։

— Ախար ես ով, այն երեխան ով, իմ ինչս է նա, իւր մէջ մտմտում էր Դանիէլը։ Իսկ այժմ նա զգաց, որ Զեսսիկան իւր սրտին մօտ մի ոք մին է եղած և ինքը որքան էլ կամենար անհանգիստ շինել երեխայի համար՝ չէր կարող։ «Ախար ինչու ինքը ոչ մի օր չարցըեց աղջկանից նրա բնակութեան տեղը . . . իրաւ է, պաստօրը զիտէր Զեսսիկայի բնակարանը . . . բայց . . . (քիչ մնաց զնում էր Դանիէլը պաստօրից տեղեկանալու, բայց վախեցաւ որ կասկածներ կարող են տանել, այդ պատճառով էլ չգնաց) . . . ինչ կասէ պաստօրը, մտածեց

Դանիէլը, թէ այս ինչ հոգս է որ ես քաշում եմ մի երեխայի համար. այս ինչ տարօրինակ կարեկցութիւն է իմ կողմից, մի կիրակի եկեղեցուց յետ ընկնելու համար: — Ոչ, մտածեց նա, այս արարքն իմ կողմից մեծ սիրտ է, կատարեալ անձնապաստանութիւն է. կարիքս ինչ. ես ով, Զեսսիկան ով . . .

Այս մտատանջութիւններով գնաց Գանիէլն իւր կացարանը և սկսեց քըքըել խնայողական գանձարանից տուած մատեանները. նստեց, համարեց իւր փողերը և որքան ուրախացաւ, երբ տեսաւ, որ մօտաւորապէս 4000 ֆունտ*) ստերլինդ ունի ժողոված, որ դեռ քանի գնայ՝ շաբաթի վրայ աւելանալու է:

Այնու ամենայնիւ, հէնց որ հետեւեալ կիրակին Զեսսիկայի տեղը նորից դատարկ մնաց՝ երկիւն ու շփոթը իսպառ համակեց մեր զգօնամիտ ու լրջախոհ Դանիէլին. քիչ մնաց՝ խեցը կորցնում էր:

Պատորը, ժամից յետոյ, ըստ սովորութեան, մտել էր խորանը հանգստանալու: Նա թիկնել էր վառարանին և տիսուր սրտով նայում էր ձեռք շմօտեցըրած շիլին-

*) Մի ֆունտ ստերլինգն արժէ մօտ 10 բուր.

դին, որ ժամնբութիւնից առաջ կանխապէս դրել էր Վալերիան: Նոյն բոպէին խորանի դուռը յետ բացուեց, և այլայլուածու երկիւղածութեամբ ներս մտաւ Դանիէլը: — Ի՞նչ կայ, Ստենդրիկ, հարցըրեց պատօրը:

— Ես շատ անհանգիստ եմ այն փոքրիկ աղջկայ համար, պատասխանեց Դանիէլը. Երեխան ինձ ասաց, որ դուք եղել էք իւր մօտ և գիտէք նրա բնակարանը. խնդրում եմ, ներեցէք վատահութեանս, եթէ կարելի է ասէք ինձ, որտեղ է կենում. ես կամենում եմ զնալ իմանալ, թէ ինչ է պատահել նորան:

— Լաւ, Ստենդրիկ, լաւ ես մտածել, պատասխանեց պաստօրը: Ես ու գաւակներս նոյնպէս անհանգիստ ենք այդ մասին: Ինքս ցանկանում էի զնալ իմանալ, տարաբախտաբար այժմ բոլորովին ժամանակ չունիմ և շեմ կարող:

— Ես ինքս կզնամ, ասաց Դանիէլը: Նա ստացաւ հարկաւոր տեղեկութիւնները, հանգըրեց եկեղեցու ճրագները, փակեց դուռը և զնաց դէպի իւր բնակարանի կողմը:

Օրը թէն տարածամ էր, մութը գետինն առնում էր, իսկ Զեսսիկայի կացարանը բա-

ւակսն հեռու էր, բայց նա մտածեց, որ
ինքը չէ կարող հանդիսաւ սրտով տուն գլ-
նալ՝ մինչև մի ճշտ տեղեկութիւն չունենայ
աղջկայ մասին։ Զուր էր ուրեմն մտքի մէջ
չափ ու ձե անում և իւր խիզնը հանդստա-
ցնելու համար խոստում անում, թէ վազը
սրճատունը վակելուց յետոյ՝ առաջին գործն
այն կանէ, որ կերթայ Հեսսիկային կայցելէ։

Ուշ երեկոյեան միջնաշաղին, ինչպէս որ
լինում է ամառավերջի երեկոները՝ Դանիէլի
աշքի առաջ պատկերացաւ Հեսսիկայի թռչ-
նած և հալումաշ գէմքը. հէնց իմանաս, մի
առաջօք երեկոյթ էր, որ շտապով անցնում
էր նրա մօտից և երբեմն-երբեմն էլ յետ
շրջում, նայում, որ տեսնէ, թէ Դանիէլը
դալիս է իւր յետեկից, թէ ոչ . . . Անկարծիք
հասկանում էր Դանիէլը, որ հասարակ երե-
ւակայութիւն էր այդ և ուրիշ ոշինչ. հէնց
զրա համար էլ նա սկսեց ինքն իւր վերայ
ծիծաղել, բայց աւաղ, մի անբնական ծի-
ծաղ էր այն. հէնց կարծես, մի բան սեղ-
մում էր իւր կոկորդը. Եյն ժամանակ՝ նա
ծայրէ ի ծայր կոճկեց իւր հանդիսաւոր օրե-
րի վերարկուն և արտագ-արտգ քայլերն ուղ-
ղեց քաղաքի կենդրոնի կողմը։

Դեռ իսպառ չէր միջնել, երբ նա հա-

սաւ Հեսսիկայի կացած բակը և պատահա-
բար մտաւ սանդուխքի մօտի անգքը, որ տա-
նում էր նրա սենեակը։ Բայց երբ Դանիէլը
բաց արեց զոմի զուռը և մթութեան մէջ
աշքը ոշինչ շտեսաւ՝ նա մնաց տարակու-
սած. ինչ անէր, որ վտանգի շենթարկուէր.
առաջ գնալը, թէ յետ դառնար. Հէնց այդ
բոպէին՝ նրա ականջին հասաւ Հեսսիկայի
նուազ ձայնը, որ լսուեց իւր զիսավե-
րեկից։

— Հայր մեր, խնդրում եմ, տղօթում էր
աղջիկը, մի մարդ ուզարկիլ ինձ մօտ, ի ուր
թիսուար քրիստոսի . . . ամէն։

— Ես այստեղ եմ, Հեսսիկա, շտապեց
խօսել Դանիէլը. Նրա սիրտն սկսեց ուժ-
գիսապէս բաբախել ոշունչ հազիւ էր քաշում։
Նա կանգնեց զոմի մէջ և մթումն այս ու
այն կողմն աշք էր ածում։ Մէկ էլ նրա աշ-
քովն ընկաւ մեզ ծանօթ սանդուխքը. որ
տանում էր ձեղնայարկը։

Դանիէլն ինքն էլ զարմացաւ, թէ ինչ
արագութեամբ բարձրացաւ ճոճուսն սան-
դուխքով և մթումը զուռը զտաւ, բաց արեց
և ներս մտաւ ու կոյրի նման մնաց խաւա-
րի մէջ կանգնած։ Բարեբախտաբար՝ մօտն
ունէր լուցկի և մեղրամոմի կոճատ. ճրա-

զը լուսաւորեց աղքատիկ խրճիթն և Զես-
սիկայի մաշուած ու դունատ երեսը:

Մուժ անկիւնում, ծածկի տակ մի քիչ
տեղ խոտ էր փռուած. այդ նեղ փռուածքի
վրայ ընկած էր ողօրմելի աղջիկը. այդ տե-
ղի միակ առաւելութիւնն այն էր, որ տա-
նիքի վրայի կղմինտրները դեռ չին թափ-
ուած: Վերմակ ասուած բանը չկար Զեսսի-
կայի վրայ. նրա ծածկոյթը՝ մեզ ծանօթ
ցնցոտիներն էին, որ նա հազնում էր:

Այն ինչ պայծառութիւն էր, որ փայ-
լեց աղջկայ երեսին՝ երբ տեսաւ նա Դա-
նիէլին կուացած իրան նայելիս:

— Այդ գոլք էք, ասաց անտէր որբը Ժըպ-
տադէմ և նուազ ձայնով. ձեզ Աստուած ա-
սաց, որ ինձ մօտ գաք, հա՞:

— Այո՛, այո՛, շտապեց պատասխանել Դա-
նիէլը: Նա բոնեց հիւանդի մաշուած ունի-
հար ձեռքը և ուղղեց նրա ճակատին շաղ
անցած մազերը:

— Աստուած ինչ ասաց ձեզ, նորից հար-
ցըեց Զեսսիկան:

— Աստուած ասաց, որ ես մի շատ մե-
ղաւոր մարդ եմ, պատասխանեց երկարա-
ցներով իւրաքանչիւր խօսքը և կարծես մըտ-
քի հետ ընկած՝ ինքն իւր մէջ խօսելով Դա-

նիէլը. Աստուած ինձ ասաց, որ ես մի բու-
ռը չնշին կոպէկներին աւելի նշանակութիւն
եմ տուել, աւելի եմ սիրել, քան թէ մի ան-
տէր, անտիրական, մինուճար, թշուառ որ-
բի, որին իւր մայրը չպրտել դուքս էր ձգել
մօտից, իսկ Աստուած նրան ուղարկել էր
ինձ մօտ, որ տեսնէ, թէ իւր սուրբ անունի
պատուին ես այն խեղճին մի բարութիւն
անում եմ թէ ոչ: Տեսաւ ինձ Աստուած,
քննեց իմ սիրտս և ասաց.—«Անմիտ, յայսմ
գիշերի զհոգիդ ի քէն ի բաց պահանջելոց են,
և զոր պատրաստեցերն ում լինիցի» . . . Եւ
զիտէս, Զեսսիկայ, ես ոչ մի պատասխան
չկարողացայ տալ Աստծուն. . . Աստուած
եկել էր ինձանից հաշիւ պահանջելու, և ես
ոչ մի խօսք չկարողացայ գտնել, որ իւր ա-
ռաջին ինձ արգարացնէի:

Միթէ դուք բարի մարդ չեք, Դանիէլ,
շնչաց Զեսսիկան:

— Ո՛չ, ես շար մարդ եմ, ասաց Դանիէլը,
և արտասուրը հեղեղի պէս թափուեց աշ-
քերից. — Ես շարունակ Աստուածոյ տանն էի
լինում, բայց միայն փողի համար . . . Ես մի
հաստատամիտ, իմ խօսքիս տէր մարդ եմ
եղել, բայց այդ բոլորը՝ իմ սեփական շա-
հերիս համար . . . փողի սիրոյն . . . Եւ ահա,

Աստուած նայում է վրաս և ասում է. «անմիտ» . . . Ախ, Ֆեսսիկա, դու աւելի մօտ ես Աստծուն՝ քան թէ ես իմ բոլոր կեանքի ընթացքում: . . .

— Ինչո՞ւ չէք Աստուծուց ինդրում, որ նա ձեզ, «յանուն Յիսուսի Քրիստոսի, բարի մարդ դարձնէ, հարցրեց երեխան:

— Ենմ կարող, ասաց Դանիէլը. ես ամեն կիրակի, պաստօրի աղօթելու ժամանակ, ինքս էլ ծնկաշող աղօթել եմ. բայց տղօթելիս՝ միտքս միշտ այն բանի վրայ է դարձել, թէ որքան երջանիկ են այն մարդիկը, որոնք իրանց սեփական կառքի մէջ բագմած զբօսնում են . . . իմ սիրածս միշտ ոսկին է եղել ոսկուն եմ երկրապագել, և քիչ է մնացել, որ քեզ քաղցած սպանեմ . . . Ինչո՞ւ: Որովհետեւ վախինում էի, թէ այդպիսով ես իմ աննշան շահերիս վնաս կարող էի պատճառել . . . Այո՛, ես ամենամեծ յանցաւորն եմ:

— Բայց չէ որ դուք դիտէիք պաստօրի յաճախակի կրկնած խօսքերը. «սէրն այն չէ, որ մենք սիրում ենք Աստծուն, սէրն այն է՝ որ նա ուղարկեց մեզ իւր Որդուն, որ միջնորդէ մեզ համար և քաւէ մեր մեղքերը». շշնչաց Ֆեսսիկան:

— Այնքան շատ եմ լսել ես այդ խօսքերը,

պատասխանեց Դանիէլը, որ այլ ևս ինձ վերայ չեն ազդում: Այո՛, մի օք կաք, որ ես սիրում էի լսել մեր պաստօրից այդ իմաստալից տասացուածքը, բայց այսօր՝ մի ականչովս մտնում, միւսովը դուրս է գնում . . . իմ սիրտս, Ֆեսսիկա, քարի նման կարծրացել է:

Ճրագի ազօտ լուսով Դանիէլը նկատեց, որ աղջիկը սիրաժպիտ հայեացքով, ուշի ուշով և տխրապէմ մտիկ էր տալիս իւր երեսին: Յետոյ նա հալուած ձեռներով ծածկեց իւր երեսը, խոնարհեցրեց զլուխը և այսպէս մըմնչաց. «աղաչում եմ քեզ, ով Աստուած, կակդացրու Դանիէլի սիրտը ի սէր Յիսուսի Քրիստոսի. ամէն»:

Ֆեսսիկան լրեց: Դանիէլը նոյնպէս մի քանի վայրկեան լուռ էր. յետոյ նա համեց իւր վերաբկուն և ծածկեց աղջկայ վրայ: Ապա նըա միտքն եկաւ Փրկչի խօսքերը, որ ի լուր ամեննեցուն պիտի արտասանէ վերջին դատաստանի օրը. «զոր ինչ արարիք միում ի փոքրկանցս յայսցանէ՝ ինձ արարիք»: Յանկարծ՝ զգաց Դանիէլը, որ իւր սիրտը համակուեց Փրկչական, աստուածային սիրով: Խոնարհեցրեց Դանիէլն իւր աշքերը և ի խորոց սրտէ վշտաբեկ արտասանեց. «Ողորմեա ինձ, Աստուած, քաւեա զիս զմեղաւորս»:

Ժ.

Հետևեալ առաւօտը՝ Դանիէլի սրմատունը, որ դանուում էր երկաթուղու կամրջի տակին՝ փակուած էր: Զարմանքը պատեց բոլոր յաճախորդներին, որոնք սովոր էին ամեն առաւօտ պատրաստ նախաճաշիկ անել այնտեղ, երբ եկան և դատարկ անկիւնը տեսան: Միանգամացն կապչէին ու կը զարմանային այդ յաճախորդները՝ եթէ կարողանային տեսնել, թէ ինչ բանով էր զբաղուած սրմափաճառը մի կիսաւեր ձեղնայարկի տակ:

Դանիէլը յանձնարարեց մի բարեսիրտ կնոջ, որ վառելափայտ և կարեոր ուտելիք գնէ, իսկ ինքը ամբողջ զիշերը մինչև լոյս տաքութեան մէջ այրուող հիւանդի կողքը կտրել, նստել էր: Իւր կցկտուը զառանցանքների մէջ Զեստիկան շարունակ աղօթում էր Աստուծուն Դանիէլի համար:

Դրացի կինը, որին Դանիէլը հրաւիրել էր հիւանդին պահելու՝ պատմեց, թէ Զեստիկայի մայրը մի շաբաթ սրանից առաջ, վախենալով, որ իւր զատեր հիւանդութիւնը կարող էր վարակիչ լինել՝ թողել ու հեռաւացել էր այստեղից:

Առաւօտը լոյսը որ բացուեց՝ Դանիէլն ուղարկեց, բժիշկ կանչել տուեց: Բժշկի հրամանով փաթաթեց նա հիւանդին իւր վերարկուի մէջ, զգուշութեամբ զրկեց, իջեցրեց սանդուխքից, նստացրեց դռանն սպասող կառքի մէջ և տարաւ իւր կացարանը: Դանիէլի տան տիրուհին գոռիւն գոշիւնը զրել էր, չէր ուզում տուն թողնել հիւանդ երեխային: Բոսէի գործ էր Դանիէլի կողմից նրան լռեցելը. նա ոսկի զրամը բուռը կոխեց, և ամենայն ինչ վերջացաւ:

Նոյն օրը ճաշից յետոյ պաստօնն ստացաւ հետևեալ նամակը.

Մեծարգոյ տէր պաստօր, հթէ զուք արժան համարէիք շնորհ անել իմ աղքատիկ խրճիթ՝ զուցէ միանգամ ևս կարող լինէիք տեսնել փոքրիկ Զեստիկային մահամերձ հիւանդ, անկողնում ընկած, սաստիկ տաքութեան մէջ: Միայն Աստուած ինքն իւր ամենառատ ողորմութեամբը կարող է լինայել և առողջութիւն պարզեել թշուառ մանկանը:

Խորին յարզանօք միամ Դանիէլ Ստենդրիզ:

Կարդալով այս նամակը՝ պաստօնն իսկոյն ձեռքի գիրքը մի կողմը զրեց և առանց ուշանալու շտապեց եկեղեցու դռնապանի

մօտ, ուր զտաւ խղճուկ Ջեսսիկային սաստիկ չերմի մէջ՝ ընկած Դանիէլի անկողնում։ Աղջկայ հալ ու մաշ եղած դէմքն ու փոս ընկած մահամերձ աշքերը անդիտակցաբար շաղուել, մոլորուել էին։ Լսեց Ջեսսիկան, որ դուռը մէկը բաց արեց, բայց այնքան ժոյլ էր, որ չկարողացաւ գլուխը յետ շրջել։ Մի քանի վայրկեան պաստօրը մնաց շեմքի վրայ կանգնած։ Նա մտիկ էր տալիս մէկ Ջեսսիկային, մէկ Դանիէլին։ Վերջինս նստել էր հիւանդի գլխավերեն և մի առ մի տնտղում էր իւր դրամարկղի մէջ պահուած թղթերը։ Ով գիտէ, այս քանիներորդ անգամն էր, որ Դանիէլն իւր աշխատած դրամագլուխը հաշւում էր։ Հենց որ պաստօրը մօտեցաւ Ջեսսիկայի անկողնին՝ իսկոյն հիւանդի կրակի պէս այրող թշերը վարդի նման կարմրատակեցին։

— Ե՞ս, տէր պաստօր, մեծ դժուարութեամբ ասաց Ջեսսիկան։ ամեն բան, ինչ որ խնդրել եմ Աստուծուց և ինչ որ ցանկացել եմ՝ նա ինձ պարզեել է, միայն Դանիէլի ինձ խմացը առերճի վարձն է, որ դեռ Աստուած չէ վճարել։

— Հանգիստ եղիք, գաւնուկս, ասաց Դանիէլը։ Աստուած ինձ հարիւրապատիկ է վընարել, և նա վեր կացաւ դիմաւորելու պաս-

տօրին։ Աստուած վերադարձեց ինձ իմ կորած մոլորուած հոգին . . . Ներեցէք ինձ, տէր պաստօր, դարձաւ Դանիէլը քահանացին։ Թոյլ տուէք ինձ միանգամից բանալ ձեր առաջ իմ սիրոս և յայտնել, թէ ինչն էք ինձ մինչև այսօր տանջում ու մաշում։ Ես լաւ գիտեմ, տէր պաստօր, որ դուք մի գիտնական և մեծ իմաստ քարոզիչ էք. ամեն կողմից բազմութիւնը լցում է եկեղեցին՝ ձեր քարոզը լսելու. Ես ինքս շատ անզամ դժուարում եմ ամոռ հասցնել ժամաւորներին։ Բայց խոստովանում եմ, ամեն կիրակի լսելով ձեր քարոզը՝ ես ոչ թէ հոգուս փրկութիւնն եմ շահում, այլ կրուստը. Ես թէպէտ միշտ ձեր աշքի առաջին եմ՝ բայց ոչ մի օր ձեր միտքը չեկաւ, որ հարցնէիք ինձ, թէ «հոգս քաշնում ես արդեօք, Ստենդրիդ, հոգուզ փրկութեան համար»։

— Դիտէք ինչ, Ստենդրիդ, խորին տըրտմութեամբ և կարեկցաբար ասաց պաստօրը։ Ես ձեզ ճանաշում էի միշտ իբրև լաւ քրիստոնեայ . . .

— Այս, շարունակեց մտամոլոր Դանիէլը. այսպէս թէ այնպէս՝ Աստուծոյ կամքն էր, որ մի մարդ ինձ առաջարկէր վերոյիշեալ հարցը, և նախախնամութիւնն իւր եկեղեցու

ծխականների մէջ շգտնելով մի այդպիսի
անձնաւորութիւն՝ ինձ ուղարկեց առաջնոր-
դող այս փոքրիկ աղջկանը, այս անտէր որ-
բին։ Թող զայ ուրեմն՝ ինչ գալու է, և եթէ
զիտենամ, որ պաշտօնից անգամ պիտի
զրկուիմ՝ դարձեալ երկիւղ չեմ կըում ամեն
ինչ ճշմարտութեամբ յայտնել ձեզ։ — Մօտ
տասը տարի է ահա, որ ես քաղաքումս մի
սրճատուն եմ պահում, լի օրերը՝ բանուոր
զասակարգին սուրճ եմ ծախում և շաբա-
թական շահուում եմ մօտաւորապէս տասը
շիլլինդ։ Վախենալով, որ զուցէ իմ առե-
տուրս հաճելի շլինէր մեր եկեղեցու բարձր-
աստիճան ժողովրդականներին՝ ես գաղտնի
էի պահում իմ ձեռնարկութիւնս և խանութս
փակում էի շատ վաղ, մօտ ութը ժամին
երեկոյեան։ Զեսսիկան նմանալէս ինձ մօտ
սուրճ էր խամում, որի վճարքը զուք հատու-
ցանում էիք, տէր պատօր։

— Ի՞նչ կայ որ. ես այդ բանում, սիրե-
լիս, պախարակելի ոչինչ չեմ տեսնում, քաղ-
ցրութեամբ ասաց պաստօրը, և զուք ի զուր
էիք գաղտնի պահում ձեր զործը։

— Յետոյ, ասաց Դանիէլը, եթէ թոյլ կը
տաք ինձ ասել, տէր պաստօր, այս փոքրիկ
աղջկայ ինձ առաջարկած հարցմունքներն

տւելի խոր տապաւորութիւն էին անում իմ
խղճի և հոգու վրայ, քան թէ ձեր քարոզ-
ները... Ջատ անդամ սա վաղ առաւօտեան
գալիս էր իմ սրճատունս և իւր հրաշալի
աշքերն երեսիս տնկելով՝ ասում էր.

Պարոն Դանիէլ, զուք սիրում էր Յիսուս
Քրիստոսին։ Դուք ուրախ էք, որ Աստուած
ձեր հայրն է. օր օրի վրայ մենք աւելի ենք
արդեօք Աստուածուն մօտենում, թէ ոչ, և այլն
և այլն։ Մի անգամ էլ սա ինձ այս հարցը
տուեց։

— Դանիէլ, ինչիդ է պէտք այդքան փողը։

— Աւաղ, այս հարցմունքն ինձ մեծ մըտ-
մտուքի մէջ ձգեց, բայց ինչ օգուտ, որ մին-
չև օրս մնացել էր իմ կողմից առանց պա-
տասխանի։ Այժմ, մինչ ես նստած սրա զըլ-
խավիրել համարում էի իմ գիգած դրամնե-
րը՝ ինքս իմ մէջ այս ասացի։ — ով Տէլ, այս
ամենն ինչ որ ես ունիմ՝ Քեզ է պատկա-
նում։ ինձ համար առաւել ցանկալի էր այս
բոլորը մինչև վերջին կոպէկը բաժանել աղ-
քատներին՝ քան թէ հողին աւանդել այս
սիրելի մանկիկին։ Սակայն եղիցին կամք քո։

Վերջին խօսքի հետ Դանիէլի ձայնը
դողաց, և նա զբեց իւր զլուխը բարձի վը-
րայ, ուր հանգչում էր Զեսսիկայի թոյլ ու

անշարժ դլուխը։ Այդ ժամանակ՝ հիւանդի երեսին արտափայլեց մի տեսակ զարմացք. քաղցր ժպիտը ըովէաբար խաղաց նրա դէմքին. նա բարձրացրեց իւր լղարած ձեռքը և զրեց Գանիէլի զլիսին։ Միւս ձեռքով նա ծածկեց իւր աշքերն և մեղմիկ մրմնչաց.

— «Աստուած իմ, ես քեզանից լնդրում էի, որ ինձ տանէիր քեզ մօտ՝ երկինքը. բայց եթէ ես Գանիէլին պէտք եմ՝ աղաչում քեզ, «յանուն Յիսուսի, Քսիստոսի», թող ինձ մի քանի ժամանակ ես սրտ մօտ. ամէն»...

Մի քանի ըստէ խորին լութիւնը տիրեց սենեկի մէջ։

Գանիէլը գլուխը հիւանդի բարձին յենած՝ մնացել էր անշարժ. պաստօրը զլիսակոր և աշքերը փակ կանդնել էր նրանց մօտ. կարծես, նա աղօթում էր այս երկուսի համար։ Նայեց պաստօրը և տեսաւ, որ անտերունչ որբի ուժասպառ ձեռքը վայը ընկաւ երեսիցը և դէմքի վրայ տիրեց հոգեկան անգործութիւնը։ Հիւանդը շնչում էր շատ կանոնատը։

Եհանար, դողահար, տխուր, տրտում, մեծ գգուշութեամբ բւնեց պաստօրը հիւանդի ձեռքը, և, ով զարմանք, փոխանակ սեռելային սառնութեան, որ շատ հաւանական էր,

մի տեսակ դուրեկան ջերմութիւն և թեթև քրտինք էր բոնել նրա անձը. այդ նշան էր, որ կեանքը յետ էր գալիս հիւանդի մէջ։

Այն ժամանակ, պաստօրը կամաց ձեռքը դիպցը Գանիէլի ուժին. վերջինս կարծես վեր թռաւ սարսափելի երազից, սիրտը զող, բարձրացրեց զլուխը։

— Հանդիսատ կացէք, շնչաց պաստօրը. այս երեխան մեռած չէ, սա քնած է։

Կամաց-կամաց կագգուրւում էր երեխան։ Գանիէլը մի փոքրիկ սենեկակ վարձեց իւր և հոգեոր զտար համար։ Երկար միջոց որոնում էր Գանիէլը Զեսսիկայի մօքը, բայց ոչ մի տեղ չդտաւ, և այդ բանով նա շատ ուրախ էր, ըստ որում ոչ ոք չկար, որին նա հաշիւ ու համար տար Զեսսիկայի վրայ տարած խնամքի և իւր քաշած նեղութիւնների վերաբերութեամբ։

Երբ Զեսսիկան բաւականին կագգուրւուց՝ նրանք երկուսով միասին առաւօտները զբօնելով զնում էին դէպի մեզ յայտնի երկաթուղու կամըջի տակը։ Զատ չքաշեց, փոքրիկ Զեսսիկան իւր պաշտօնն ունեցաւ սուրճի սեղանի մօտ. նա արդէն վարժուել էր և սիրով ծառայում էր իրանց ամենօրեայ յաճախորդներին։

Ուրախալի էին անցնում շարունակ Զես-
սիկայի օրերը. նրա ուրախութիւնը դադար-
նակէտին էր հասնում՝ երբ նա օգնում էր
Դանիէլին. նա եկեղեցին սրբում, աւլում էր,
փոշիները թափ էր տալիս այն տեղերից,
ուր ինքը քանի մի ժամանակ առաջ զողու-
նի էր մտնում: Ամենամեծ բաւականութիւն-
ներն էին նրա համար՝ ամբիոնը, խոբանը և
պատօրի աղջկանց նստարանները մաքրելը:
Իսկ Դանիէլը մի ուրիշ վարձկան կնոջ հետ՝
եկեղեցին էին մաքրում ու պատրաստում:

Հատ ու շատ անգամ՝ պատօրի իւր ամ-
բիոնից, նրա բարեսիրոտ աղջիկներն իրանց
նստարանների վրայից և ինքը Դանիէլն եկե-
ղեցում մի տեղից միւսը զնալու ժամանակ,
երբ նայում էին Զեսսիկայի երջանկութիւ-
նով լի երեսին՝ նրանք մտաբերում էին այն
ժանր բոպէն, երբ առաջին անգամ տեսել
էին թշուառ երեխային ժամանորների մէջ
նստած. նա մանաւանդ զորովալից խան-
դաղատանկով յիշում էին Զեսսիկայի առա-
ջին անդրանիկ աղօթքը:





ՀՀ Ազգային գրադարան

NL0596522

